

ՎԱՆԴԱԼԻԶՄԻ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐ

Երբ մեր հարեան երկրում վանդալիզմի դէպքեր են արձանագրուում եւ հայկական յուշարձաններ են պղծուում, մեր ազգային ինքնութիւնը վիրաւորուում է, բայց մենք մեզ միայն չենք նրանով, որ վանդալիզմի հեղինակները մենք չենք, այլ մեր բարբարոս հարեանները, որոնց իրական դէմքն աշխարհին ներկայացնելու հերթական հնարաւորութիւնն ենք ստանում: Բայց ի՞նչ է զգում Հայաստանի քաղաքացին, երբ իմանում է, որ մեր իսկ հողի վրայ, մեր իսկ համաքաղաքացու ձեռքով պղծուում է Յեղասպանութեան եւ Հոլոքոստի Յուշարձանը: Յեղասպանութեան յուշահամալիրի եղեւնիների պուրակն է ոչնչացւում: Պատմական յուշարձանից գողացուած քարերով ամառանոց են կառուցում եւ այլն:

Երէկ վանդալիզմի հերթական ակտն է տեղի ունեցել Օղակաձեւ գրասպասարանում: Ընդ որում, Հոլոքոստի՝ հրեաների ցեղասպանութեանը նուիրուած յուշարձանն առաջին անգամ է, որ ենթարկուում է նման բարբարոսական

վերաբերմունքի: Դժուար է հասկանալ «բարբարոսների» մտածողութեան կերպը՝ ի՞նչն է դրդում նման արարքի, այն էլ մարդկային ողբերգութեան խորհրդանիշ յուշարձանի նկատմամբ: Այնպէս, ինչպէս դժուար է հասկանալ Մարտի 1-ին ժողովրդի վրայ գէնք կիրառողների մտածողութիւնը: Ազատութեան հրապարակը փակողներին: Բողոքի ակցիայի մասնակիցներին ծեծողներին: Ընդհանրապէս, բարբարոսութիւնը կարող է ամենատարբեր կերպ արտայայտուել, սկսած ծառ կտրելուց, վերջացրած մարդ սպանելով: Մասշտաբներն անշուշտ տարբեր են ու անհամեմատելի, բայց ամէն ինչ սկսում է հարութեան ու դաժանութեան փոքրիկ, անպատիժ մնացող դրսեւորումներից: Այն ոստիկանը, որը մահակն իջեցնում է ցուցարար աղջկայ մէջքին, վաղը կրակելու է նրա եղբոր ուղղութեամբ: Իսկ արդարացում միշտ կը գտնուի. պետական կարգին ու իր աշխատատեղին վտանգ էր սպառնում:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՃՈՊԱՆ ՏԵՍԻԼ

ՅԱԿՈՒԲԱՆԱԼԵԱՆ

Հայաստանը շահագործման յանձնեց Տաթևի ճոպանուղին, իսկ Սերժ Սարգսեանը մասնակցելով դրա հանդիսաւոր արարողութեանն ու նոյնիսկ ելույթ ունենալով, յայտարարեց, թէ այդ «ճոպանուղին ապացուցում է, որ ամենամահաւանական երազները դառնում են իրականութիւն»: Փաստորէն, Հայաստանի իշխանութեան համար ճոպանուղին հաւասարազոր է «անհաւանական երազի»: Թերեւս դա է պատճառը, որ Հայաստանում խօսում են իրան-Հայաստան երկաթուղուց, Հիւսիս-Հարաւ ռեգիոնայ աւտոճանապարհից, նոր ատոմակայանից, համաշխարհային ճգնաժամից փախչող կապիտալի նաւահանգիստ դառնալուց, սակայն իրականութիւն առայժմ միայն ճոպանուղին է դառնում, հուշակոտորով անհաւանական երազ:

Հեռուտարնկերութիւններն ուղիղ միացումներ էին ապահովում Տաթևից, ուր հաւաքուել էր երկրի իշխող աշխարհիկ եւ հոգեւոր «վերնախաւը», բացառութեամբ Յովիկ Աբրահամեանի, ով այդ միջոցին վայելում էր Յուստատանն ու Կիպրոսը, եւ Զորի Բարսեանը: Ծոպանուղին ներկայացւում էր մօտաւորապէս այնպիսի պաթոսով, որ կարծես թէ Հայաստանը տիեզերանա է բաց թողել երկինք:

Ծոպանուղին իհարկէ լաւ բան է: Ծառ լաւ բան է, որ այն կառուցուում է գրեթէ աշխարհից կտրուած Տաթևում, տարով այնտեղ տնտեսական, հետեւաբար նաեւ սոցիալական կեանքն աշխուժացնելու հնարաւորութիւն, թէեւ տեղացիներից շատերն էլ մտավախութիւն ունեն, որ այդ աշխուժութիւնը կ'արձանագրուի տեղանքի հոգեւոր կենդանիկայի կորստի հաշուին: Բայց երկու երնէկ մի տեղ չի լինում, եւ միզուցէ ժամանակի ընթացքում հոգեւորն ու սոցիալականը կը հաշտուեն իրար հետ, եւ հնարաւոր կը լինի ապահովել միաժամանակեայ գոյութիւն Տաթևում:

Խնդիրն այն է, որ այդ ամէնը ներկայացւում է այնպէս, կարծես Հայաստանի փրկութիւնը կախուած

էր այդ ճոպանուղուց: Մինչդեռ շատ դժուար է ասել, թէ արդեօք դա նոյնիսկ Տաթևի «փրկութիւնն» ապահովելու ունակ կառուց է: Զե որ դեռ յայտնի չէ, թէ Տաթևի բնաշխարհի հետ ինչ կարող է տեղի ունենալ, եթէ ամբողջութեամբ իրականացուի «Տաթևի վերածնունդ» կոչուած ծրագիրը: Ի վերջոյ, մենք արդէն իսկ դարձել ենք Ծաղկաձորի «վերածննդի» ակնատես, տեսնելով, որ Հայաստանում տուրիզմի «գարգաջումը» որպէս կանոն տեղի է ունենում բնութեան հաշուին:

Ծառ լաւ կը լինի, որ Տաթևը լինի բացառութիւն: Աւելին, շատ լաւ կը լինի, որ Տաթևը դառնայ հարցի միայն մի կողմը: Իսկ միւս կողմը, որը վերաբերում է պաթետիկ քարոզչութեանը, մնում է բաց: Ծոպանուղու բացման քարոզը, իսկ այն, ինչ տեղի էր ունենում հեռուստատեսութեան, հենց քարոզ էր, ոչ թէ լուսաբանում, այլապէս ամենաերկար ճոպանուղին մի քիչ աւելի երկար ցոյց կը տային, քան Սերժ Սարգսեանին, թողնում էր այն սպաւորութիւնը, որ նպատակը Հայաստանի բնակչութեանը համոզելն էր, թէ Տաթևի ճոպանուղին իմաստաւորել է նոյնիսկ Մեղրիում կամ Աշոցքի հեռավոր գիւղում ցրտի ու գայլերի դէմ պայքարող բնակչի կեանքը: Կամ քարոզի նպատակն էր մարդկանց ներշնչել, որ իշխանութիւնից ազատութիւն, օրէնք, իրաւունք եւ ոչ մի աւելորդ այլ թիթիկութիւն պահանջել պէտք չէ, այլ ընդամենը պէտք է պահանջել մէկական ճոպանուղի իւրաքանչիւր բնակավայրի համար, եւ պայծառ ապագան ու երջանկութիւնն ապահովուած է:

Բայց արդեօք այդ քարոզները համոզում են բնակչութեանը: Մի քիչ կասկածելի է: Աւելի շուտ թերեւս համոզում են, եւս մէկ անգամ, որ Հայաստանի իշխող «վերնախաւը» իրականութեան հետ որեւէ կապ չունի, ապրում է բոլորովին այլ իրողութիւնների եւ հասկացութիւնների պայմաններում, քան հասարակութիւնն ու պետութիւնն իր ինդիրներով: Այլապէս քարոզի փոխարէն կը լինէր լուսաբանում, իսկ ճոպանուղու փոխարէն հեռուստա-

ԿՈՐՑՆԵԼՈՒ ԲԱՆ

ԱՐԱՄ ԱՐԱՆԱՄԵԱՆ

Վերջին հանրահաւաքում ընդդիմութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը մի ուշադրաւ միտք յայտնեց, որը, ըստ երեւոյթին, արժէ գարգացնել: 98-ին իր թիմը հեռացաւ իր հետ հենց այն պատճառով, որ մարդիկ կորցնելու բան չունէին՝ կոռուպցիայի եւ անօրինականութիւնների մէջ թաղուած չէին: Այդ դիտարկումը հիմնականում արդարացի է՝ չնայած աւելի ճիշդ ձեւակերպումը կը լինէր հետեւեալը. ովքեր 98-ին գնացել էին, կորցնելու բան չունէին, իսկ ովքեր մնացել էին՝ ունէին: Յամենայնդէպս, Տէր-Պետրոսեանի թիմի այն ներկայացուցիչները, ում ես անձամբ եմ ճանաչում (օրինակ, Լեւոն Զուրաբեանը) նիւթական առումով կորցնելու բան չեն ունեցել որեւէ ռեժիմի ժամանակ եւ երբէք չեն էլ ունենալու, որովհետեւ ապրում են այլ սկզբունքներով ու արժէքներով, որոնք, ի դէպ, այսօրուայ իշխանաւորների մեծ մասի համար «անհասանելի են», նրանց մտահորիզոնի «ծածկոյթից դուրս են»:

Որ իշխանութիւնը քրէականացուած է, եւ որ կրիմինալը մասնակցում է քաղաքական գործընթացներին՝ դա ակնյայտ է: Հեռու չգնալու համար նշենք, որ Երեւանի աւագանու ընտրութիւնների ժամանակ «Բոկո» մականունով քրէական տարրը յարձակուել էր «Առաւօտի» թղթակցի վրայ եւ խոչընդոտել նրա աշխատանքը: Նման հարիւրաւոր դէպքեր (ոչ միայն լրագրողների, այլեւ ընդդիմութեան ներկայացուցիչների հետ) տեղի են ունեցել վերջին տարիներին բոլոր ընտրութիւնների եւ յաճախ նաեւ հանրահաւաքների ժամանակ: Դրանք փաստեր են, որոնց վերաբերեալ

եթերը կը զբաղեցնէին պետութեան եւ հասարակութեան համար ներկայիս առաւել հրատապ հարցերը, որ կան թէ ներքին, թէ արտաքին քաղաքականութեան ոլորտում: Այլապէս հեռուստարնկերութիւնները ոչ թէ կը խօսէին այն մասին, թէ իբր Տաթևի ճոպանուղու բացումը դարձել է համաշխարհային լրատուութեան ուշադրութեան առարկան, բայց դրա տակ կը ցուցադրէին ընդամենը հայաստանեան լրատուական գործակալութիւններից մէկի կայքի ռուսալեզու էջի կադրեր, ինչպէս արեց հեռուստարնկերութիւններից մէկը, այլ կը խօսէին օրինակ այն մասին, որ համաշխարհային մամուլի ուշադրութեան առարկան իրապէս դարձել է ԱՄՆ-ում բացառապէս հայկական, եւ նոյնիսկ փաստացի հայաստանեան յանցախմբի թեման, որը շրջանաւորում է առաջատար համաշխարհային լրատուամիջոցների առաջին էջերում:

Այդ պայմաններում, իրականութեանն առաւել համարժէք է թւում այն մտայնութիւնը, որ ճոպանուղու կամ այդօրինակ նախաձեռնութիւնների բուն իմաստը ոչ թէ երկրում իրավիճակ փոխելն է, որքան առկայ իրավիճակը արմատաւորելու եւ բիւրեղացնելու համար հասարակութեան ուշադրութիւնը իրապէս հիմնարար խնդիրներից շեղելը: Թո՛ղ միայն թարութիւնն այն է, որ դրան հասնելու ճանապարհին իշխանութիւնը կասեց, թէ ակամայ, մի քիչ կը բարեւաւի Հայրիճորի եւ Տաթևի բնակչութեան սոցիալական վիճակը:

«ԼՐԱԳԻՐ»

արձանագրուած է օրը, ժամը, եւ մեղաւորները վաղ թէ ուշ կը կանգնեն դատարանի առաջ: Բանն այն է, որ ոչ միայն ներկայիս նախարարներն ու պատգամաւորները կորցնելու բան ունեն, այլեւ նրանց սպասաւորները, որոնք երբեմն կոչուում են «թիկնապահներ», երբեմն՝ «թաղի տղերք», երբեմն էլ իրենց անունով՝ «կրիմինալ»:

2008 թուականի նախագահական ընտրութիւններին «Պզոյի» մասնակցութեան վերաբերեալ փաստերն առայժմ չեն հրապարակուել: Եթէ կայ այդ մասնակցութիւնն ապացուցող ձայնագրութիւն, տեսագրութիւն, փաստաթուղթ, կոնկրետ մարդու վկայութիւն, մենք դրանք սիրով կը հրապարակենք: Եթէ չկայ, ապա զուցէ քաղաքական առումով մաֆիոզի ներգրաւուածութեան մասին պնդումը հնչեղ է, բայց որակեալ լրագրութեան տեսանկիւնից՝ «պատի տակի խօսակցութիւն»:

Բայց կայ աւելի էական հարց. ի՞նչ է պէտք անել, որպէսզի պաշտօնեաները կորցնելու բան չունենան: Բարձրացնել նրանց աշխատավարձերն ու թոշակները, որպէսզի օրինական եկամուտը արժանապատիւ կեանք ապահովի՝ նաեւ պաշտօնը լքելուց չեստոյ: Բացի ժողովրդի վրդովմունքից, այդ քայլը ոչ մի հետեւանք չի ունենայ: Փոխարինել կոռումպացուած պաշտօնեաներին ազնիւներով: Վախենամ, մօտակայ տասնամեակներում ոչ մի պարկեշտ մարդ չի ցանկանալ որեւէ լուրջ պաշտօն զբաղեցնել՝ վարկաբեկիչ է: Փոխել «թախսի համար նախատեսուած համակարգը»: Թերեւս: Բայց ո՞վ պիտի փոխի: Այդ համակարգից օգտուողները:

«ԱՌԱՒՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 SOFƏ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱ ԹՈՒԹՃԵԱՆ
 ՅԱՐՈԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
 Քեռ. (626) 797-7680
 Ֆաքս. (626) 797- 6863
 E:Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E:Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second
 Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail),
 \$125.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՒ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի նշանակումների 18-ին մի շարք կանխատեսումներ է հնչեցրել Ազգային ժողովում ընթացող բեռնաթմբի քննարկումների ընթացքում: Առաջին հերթին, ըստ վարչապետի, կը գերակատարուի եկամուտների 2010 թ. պլանը: «Այս պահին 40 մլրդ դրամի եկամուտների գերակատարում ունենք եկամուտների մասով: Հարկային մուտքերը վկայում են այն մասին, որ ունենք աւելի բարձր տնտեսական աճ, քան կանխատեսում էինք: Ամենայն հավանականությամբ՝ 2010 թ. բեռնաթմբի հիմքում դրուած ՀՆԱ աճի 1,2 տոկոս մակարդակը կը գերազանցենք 2 անգամ», - նշեց Տիգրան Սարգսյանը:



Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյան

ընդամենը 2,4 տոկոս: Այսինքն՝ ըստ ֆինանսների նախարարի՝ տնտեսական իրական աճը պէտք է գերազանցի բեռնաթմբի հիմքում դրուած մակարդակը ոչ թէ 2, այլ 3 անգամ: Յիշեցնենք, որ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի վերջին կանխատեսումն էլ Հայաստանի տնտեսական աճը սպասուած է 4 տոկոսի սահմաններում, որը զգալիորէն գիջում է համաշխարհային զարգացման միտումներին (սպասուած է համաշխարհային տնտեսութեան միջինը 4,6 տոկոս աճ):

Վարչապետի այս յայտարարութիւնը վկայում է, որ կառավարութիւնում տարակարծութիւններ կան 2010 թ. տնտեսական աճի կանխատեսումների առումով: Այսպէս՝ վարչապետից անմիջապէս յետոյ ելուած ֆինանսների նախարար Տիգրան Դաւթեանը տնտեսական աճը կանխատեսեց 3,4 տոկոս, այնինչ վարչապետի ներկայացրած թուաբանութիւնում տնտեսական աճը պէտք է կազմի

ԱՐԱ ԱՐԱՀԱՄԵԱՆԸ ԿԱՊ ՉՈՒՆԻ ԳԻՒԱՑԻՆԵՐԻՑ ՀՈՂԵՐ ԽԼԵԼՈՒ ՀԵՏ, ԴԱ ԱՆՈՒՄ Է ՆՐԱ ԵՂԲԱՅՐԸ

Ռուսաստանի հայերի միութեան նախագահ Արա Աբրահամեանը NEWS.am-ին յայտնել է, որ Կոտայքի մարզի Արտաւազի գիւղական համայնքի տարածքում գիւղացիներից հողեր խլելու հետ կապ չունի, դա իր եղբայրն է անուած՝ Գագիկ Աբրահամեանը:

«Ինձ յայտնի է, որ իմ եղբայրը ցանկանում է այնտեղ գործարան կառուցել, բայց խնդիրներն ինձ հասկանալի չեն: Եթէ կան ինչ-ինչ խնդիրներ, մենք բոլորս պէտք է սովորենք դրանք իրաւական հարթութեան վրայ լուծել», - NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշել է Ռուսաստանի հայերի միութեան նախագահ Արա Աբրահամեանը:

Նրա խօսքով, բիզնեսում զգացմունքները տեղին չեն: «Բիզնեսում ու զգացմունքները տարբեր հասկացութիւններ են: Ես չգիտեմ, թէ ինչի մասին է խօսքը, ինձ յայտնի է որ եղբայրս գործարան է ուզում կառուցել: Ես որեւէ կապ չունեմ դրա հետ», - ասել է նա:

Նշենք, որ օրերս լրատուամիջոցներում տեղեկութիւններ էին տարածուել, թէ արաբ մի շէյխի ներդրումների անուան տակ Ռուսաստանի հայերի միութեան ղեկավար Արա Աբրահամեանի եղբայր Գագիկ Աբրահամեանը փորձում է շուրջ 100 քաղաքացիներից հողեր խլել ՀՀ Կոտայքի մարզի Արտաւազի գիւղական համայնքի սահմաններում: Աբրահամեանները շէյխի հետ համատեղ որոշել են հենց այդ հատուածում հանքային ջրերի գործարան կառուցել կամ էլ զուարճանքի փոքրիկ քաղաք, որի հետեւանքով շուրջ 100 քաղաքացի ստիպուած է լինելու գրկուել իր ունեցուածքից: ՀՀ էկոնոմիկայի «եւրոնախարար» Ներսէս Երիցեանի գործուն ջանքերով այդ հատուածը ճանաչուել է գերակայ հանրային շահ: Քաղաքացիները դիմել էին դատարան՝ բողոքարկելով ՀՀ կառավարութեան որոշումը, սակայն դատարանը մերժել է հայցը՝ «հալած իւղի տեղ ընդունելով» կառավարութեան որոշումը:

ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԸ ՆԱԽԱԳԱՀԻՑ ՍՏԱՅԱԾ ՊԱՐԳԵԻԸ ՀԵՏ Է ՈՒՂԱՐԿԵԼ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ

«Լինենք տէրը պետութեան» հասարակական կազմակերպութեան նախագահ, ՀԱԿ ներկայացուցիչ, ազատամարտիկ Արմէն Համբարձումեանն արդէն հետ է ուղարկել նախագահից ստացած իր պարգևը: Այս մասին Tert.am-ին տեղեկացրեց Արմէն Համբարձումեանը:

«Մեղալը հետ եմ ուղարկել Հոկտեմբերի 16-ին, ցերեկը, Սարեանի պոչտայից», - ասաց Արմէն Համբարձումեանը՝ նշելով, որ փոստատանն իրեն տեղեկացրել են, որ մեղալը նախագահական կը հասնի Երկուշաբթի: Այս պահին Համբարձումեանը դեռ տեղեկութիւն չունի՝ նախագահի աշխատակազմը ստացել է այն, թէ ոչ:

Յիշեցնենք, որ ՀԱԿ ներկայացուցչին Սեպտեմբերի 20-ին՝ Հայաստանի անկախութեան 19-ամեակի եւ Յատուկ զնդի 20-ամեակի առթիւ Հայաստանի նախագահը մարտական արիութեան մեդալ էր շնորհել, որից Համբարձումեանը որոշել է հրաժարուել:

Իր որոշումը Tert.am-ի հետ զրոյցում Համբարձումեանն այսպէս էր մեկնաբանել. «Ոչ լեզիտիմ նախագահն ինձ պարգևատրեց մարտական արիութեան մեդալով, եւ քանի որ ես այս իշխանութիւններին համարում եմ ոչ լեզիտիմ, չեմ կարող այդ պարգևը վերցնել»:

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ՅՈՒՇԱՆՈՒԵՐՆԵՐ՝ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Երեւանի Ազատութեան հրապարակում՝ Ալեքսանդր Սպենդիարեանի եւ Յովհաննէս Թումանեանի արձանների միջեւ ընկած տարածքում, այժմ տեղադրուած են սեղաններ, որտեղ վաճառուած են յուշանուէրներ:



Իշխանութիւնները տարբեր միջոցներով «գրաւուած» կը պահեն Ազատութեան հրապարակը

Ինչպէս վաճառողները փոխանցեցին՝ նախնական պայմանաւորուածութեամբ տարած քն իրենց անվճար է տրամադրուել, ասել են՝ 20 օրով:

«Ունեմ ընկերուհիներ, որոնք աշխատում են վերնխաժում, նրանք ինձ տեղեկացրեցին, որ այսպիսի նախաձեռնութիւն կայ, քաղաքապետարանն է կազմակերպել՝ նուիրուած «էրեբունի-Երեւան» տօնակատարութեանը», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պատմեց վաճառողուհիներից մէկը:

«Մէկմէկու միջոցով իմացել ենք: Ես վերնխաժում եմ լինում, այնտեղից եմ եկել այստեղ», - ասաց մէկ այլ վաճառող՝ ով իր փայտէ աշխատանքներն էր ներկայացնում եւ կնոջ ձեռագործ սիւնոցները:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպչական բաժնի ղեկավար Գագիկ Բաղդասարեանը, սակայն, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պնդեց, թէ մտալոցացումը քաղաքացիներին է եղել:

«Քաղաքապետարանում ստացուել են աւելի քան 20 անհատ ձեռնբեռնների եւ ստեղծագործողների դիմում, որով խնդրում են Օպերային յարող տարածքում իրենց

ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք կազմակերպել», - նշեց Բաղդասարեանը՝ յաւելելով, որ թոյլտուութիւնն այդ անձանց տրուած է մինչեւ Նոյեմբերի 25-ը:

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) համակարգող Լեւոն Զուրաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում կարծիք յայտնեց, թէ երէկուանից բացուած այս ցուցահանդես-վաճառքը «իշխանութիւնների վախի հերթական արտայայտութիւնն է»:

«Ամէն ինչ անում են, որ Ազատութեան հրապարակում չկայանայ ընդդիմութեան հանրահաւաքը», - ասաց Զուրաբեանը: Նա նշեց, որ ամէն օր քաղաքապետարան են դիմում՝ Ազատութեան հրապարակում հանրահաւաք անցկացնելու համար, եւ ամէն օր մերժում ստանում: ՀԱԿ-ի համակարգողը յաւելեց, թէ կուտակում են քաղաքապետարանի մերժումներով թղթապանակը՝ Եւրոպատարանի դիմելու համար:

Քաղաքապետարանի ներկայացուցիչն ասաց, որ ՀԱԿ-ի կողմից հանրահաւաքի մասին իրազեկումները վերջերս յաճախակի են դարձել, բայց դրանք ամէն օր չեն ստացուում:

ՓՈՐՁ Է ԱՐԻՈՒՄ «ԻՍԿԱՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ» ՀԵՌՈՒՄՍԱՏԵՍՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼ

Հայաստանում ստեղծուել է «Ժողովրդական հեռուստատեսութիւն» հիմնադրամ, որի նպատակը հանրութեան կարիքները իսկապէս բաւարարող հեռուստատեսութիւն ունենալն է: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Գիւմրիի Ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղեանը:

Բարսեղեանը նորաստեղծ հիմնադրամի 9-հոգանոց հոգաբարձուների խորհրդի անդամներից մէկն է: Անդամների թիւում են նաեւ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը, «Առաւօտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամեանը, իրաւապաշտպան Արթուր Սաքունցը եւ հանրութեանը յայտնի այլ անձինք:

Ըստ Բարսեղեանի, Հայաստանում իսկապէս հանրային հեռուստատեսութեան ստեղծումը իրենք տեսնում են «Ա1+»-ին եթեր վերադարձնելու միջոցով, որը հայաստանեան հեռուստադաշտում կը կարողանայ ապահովել կարծիքների բազմազանութիւն: Այսօր նա-

խաձեռնութեան հեղինակները տարածեցին մամուլի հաղորդագրութիւն, ուր ասուած է, թէ մտադիր են դրամահաւաք անցկացնել՝ հեռուստատեսակազմի անուանակարգողներին առաջիկայ մրցոյթին «Ա1+»-ի յայտը ամրապնդելու համար: Ֆինանսական միջոցները կը յատկացուեն նաեւ Ժողովրդական հեռուստատարտարանի ստեղծմանը:

«Ա1+» հեռուստաընկերութեան նախագահ Մեսրոպ Մովսէսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ Հայաստանում մտահոգուած են ազատ խօսքի սահմանափակմամբ, ուստի եւ որոշուել է «Ժողովրդական հեռուստատեսութիւն» հիմնադրամի ստեղծմամբ աջակցել խօսքի ազատութեան ամրապնդմանը: «Երեւի հիմնական պատճառներից մէկը այն է եղել, որ այդ 9 հոգին որոշեցին Ժողովրդին դիմել եւ նրանց օգնութեամբ մոնիթորինգի տակ պահել անցկացուող մրցոյթը»:

Մեսրոպ Մովսէսեանը նաեւ տեղեկացրեց, թէ «Ա1+»-ը ներկայացնելու է իր յայտը հեռուստատեսակազմի ներկայացուած առաջիկայ մրցոյթին:

ԼՈՒՐԵՐ

«ՇԱՏ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԿԸ ԼԻՆԻ, ԵԹԵ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՉԼՈՒԾՈՒԻ ԵՄ 40 ՏԱՐԻ»

«Շատ ողբերգական կը լինի, եթէ դարաբաղեան հակամարտութիւնը չլուծուի եւս 40 տարուայ ընթացքում», - «Կոմերսանտ»-ի հարցազրոյցում յայտարարել է Հարաւային Կովկասում Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմբերին՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը «արդէն չափազանց երկար է շարունակուած, վտանգ է ներկայացնում տարածաշրջանի երկրներին համար, տարածաշրջանի հարեւանների համար»:



Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմբերի

«Անհրաժեշտ է աւելացել ջանքերը այդ հակամարտութիւնը լուծելու համար: Անհրաժեշտ է ուժեղացնել հրադադարի դիտարկման ուժեղացումը շփման գծում, որտեղ վերջին ամիսների ընթացքում միջադէպեր ու փոխհրաձգութիւններ տեղի ունեցան», - ասել է Սեմբերին:

«Հրադադարը, իհարկէ, խնդիրը չի լուծում, բայց այն նպաստում է բանակցային գործընթացի նորմալացմանը», - շեշտել է Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչը:

Նա հրաժարուել է մեկնաբանել Հայաստանում ուսակական ռազմակայանի տեղակայման ժամկէտը երկարաձգելու մասին պայմանագիրը՝ ասելով. - «Ես չեմ ցանկանում գնահատական տալ այդ պայմանագրին: Դա Ռուսաստանի եւ Հայաստանի երկկողմ գործն է: Մեզ, իհարկէ, այդ հարցը հետաքրքրում է, ես կարծում եմ՝ այսօր անհրաժեշտութիւն կայ խորհրդակցել տարբեր կողմերի»:

հետ եւ համոզել հարեւաններին, որ այդ պայմանագիրը նրանց համար որեւէ վտանգ չի ներկայացնում»:

Սեմբերին նշել է, որ «Կովկասում ռազմական ներուժը պէտք է դիտարկել աւելի լայն համատեքստում»: «Օրինակ, զարմանալի չէ Հայաստանի այսօրուայ անհանգստութիւնը Ադրբեյջանի խոշորամասշտաբ ռազմական ծախսերի կապակցութեամբ: Եթէ կողմերը շարունակեն միջոցներ ու հակամիջոցներ կիրառել, դա, վերջնական հաշուով, կարող է մեծացնել ուժի կիրառման հնարաւորութիւնը, որը վտանգաւոր եւ ողբերգական կը լինի: Ձի կարելի թոյլ տալ Լեռնային Ղարաբաղի եւ միւս հակամարտութիւնների ռազմական լուծման հնարաւորութիւնը», - «Կոմերսանտ»-ի հարցազրոյցում ընդգծել է Հարաւային Կովկասում Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱՌԹԻ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՅԵՐ



Ընդդիմադիր երիտասարդները կը պահանջեն քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը

Շարունակուած էջ 1-էն

էին՝ «Մարտի 1-ի» մեղաւորներու բացառաւարտումը, անկախ հեռուստաընկերութեան վերաբացումը, արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններու կայացումը եւ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը:

Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր Պետրոսեան հանրահաւաքի ժամանակ իր ունեցած ելոյթի ընթացքին յայտնեց, որ Հայաստանի իշխանութիւնները դրական քայլեր կատարելու պատրաստակամութիւն կը ցուցաբե-

րեն, միմիայն պատժամիջոցներու սպառնալիքներուն առջեւ:

«Չզայտուած է, որ միջազգային հանրութեան համբերութիւնը հատուած է», - յայտարարեց Տէր Պետրոսեան, - «Ռուսաստանում, Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Մալազիայում, Աւստրալիայում կատարուած սկանդալային բացառաւարտումներում Հայաստանը ներկայացուած է որպէս փողերի լուսցման, նարկոբիզնեսի, թրաֆիկինգի եւ միջազգային առևտրային գաղութներու թիւնների կենտրոն»:

Գոնկրէսի հանրահաւաքին յաջորդած է երթ՝ Ազատութեան հրապարակի շուրջ:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՐՔՈՒՄ ԵՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՆՑԱԽՄԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի իշխանութիւնները հերքում են ընդդիմութեան պնդումները ԱՄՆ-ում անցած շաբաթ բացառաւարտած հայկական խոշոր յանցանքի դեկալար՝ «Պզ» մականունով Արմէն Ղազարեանի եւ նախագահ Սերժ Սարգսեանի մտերիմ յարաբերութիւնների մասին:

«Ծիծաղելի, մտացածին, իրականութիւնից միլիոնաւոր կիլոմետրերով հեռու տեղեկութիւն է: Իհարկէ, դա անհեթեթութիւն է, նման բան լինել չի կարող եւ չկայ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Սերժ Սարգսեանի գլխաւորած Հանրապետական կուսակցութեան խօսնակ Էդուարդ Շարմազանովը:

Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռամիկ Զոհրաբեանն էլ յաւելում է. - «Սերժ Սարգսեանն այն անձնաւորութիւնը չէ, որ պզոնների հետ կապ ունենայ: Մենք քրէական աշխարհի հետ կապուած չենք, մենք նրանց ձերբակալում ենք եւ համապատասխան պատիժ ենք տալիս»:

Ինչ վերաբերում է 90-ականներին Հայաստանից հեռացած եւ Ամերիկայում բնակեցրու խարդախութիւնների համար մեղադրուող այս անձի հետ Հայաստանի իշխող

վերնախաւի այլ ներկայացուցիչների մտերմութեան մասին պնդումներին, Զոհրաբեանը, մասնաւորապէս, ասաց. - «Հիմա ինչ է, եթէ ես յանկարծ այդ թաղամասում ապրելիս լինէի եւ ճանաչէի, ինձ է՞լ պիտի կապէին այդ մարդու մարդու հետ: Այդ կապը պէտք է ապացուցուի իրաւաբանօրէն, ասուի, որ այս այս-այս յանցագործութիւններն են կապուած այս մարդու հետ»:

Իշխող Հանրապետական կուսակցութիւնը վրդովուած է նաեւ ուրբաթ օրը ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի անցկացրած հանրահաւաքում հնչեցուած այն յայտարարութիւններից, թէ «Պզ» մականունով Արմէն Ղազարեանը 2008-ի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների ժամանակ համակարգել է մի շարք քրէական տարրերի աշխատանքը Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ պայքարում:

«Հայաստանի իշխանութիւնները, մասնաւորապէս՝ Սերժ Սարգսեանը, նման խնդիր ոչ ունեցել է, ոչ ունի: Ես անլուրջ եմ վերաբերուած այդ յայտարարութիւններին, նրանք որեւէ աղերս չունեն իրականութեան հետ», - հակադարձեց Շարմազանովը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՖԻՆԱՆՍԱԻՈՐՈՒՄԸ

Աւելի քան 50 ֆրանսիացի պատգամաւորներ հանդէս են եկել Ֆինանսական յատկացումների մասին օրինագծում փոփոխութիւն կատարելու պահանջով: Նրանք առաջարկում են օրինագծից հանել այն դրոյթը, որով 2007-2013թթ. 900 մլն Եւրօ պէտք է յատկացուի Թուրքիային այդ երկրի ԵՄ անդամագրման գործընթացի շրջանակում:

Այս մասին Ֆրանսիայից հաղորդում է անկախ լրագրող Ժան էֆենը: Ըստ նրա, Ֆրանսիայի վերջին շրջանի բոլոր սոցհարցումները ցոյց են տալիս, որ Ֆրանսիացիները կողմ են Թուրքիայի հետ ԵՄ արտօնեալ գործընկերութեանը, բայց ոչ լիարժէք անդամակցութեանը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԿՏԱՆԳԱԻՈՐ ԿԸ ՆԿԱՏԵՆ

Շարունակուած էջ 1-էն

թիւն, որը գալիս է նրանից, որ մի կողմը՝ Ատրպէյճանը, ակտիւ է, հայկական կողմը՝ պասիւ է»:

Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին յայտնեց, թէ նման գաղափարները իրենց համար անպատշաճ չէին. - «Ատրպէյճանական դիւանագիտութեան վերջին երեք տարիներու աշխատանքի արդիւնք է»:

«Երբ ողջ հայկական դիւանագիտութիւնը եւ արտաքին քաղաքականութեամբ զբաղուող գործիչները իրենց ջանքերը ուղղում էին միայն մէկ բանի՝ Հայաստանի

ոչ լեզիտիմ իշխանութիւնը արտասահմանում ներկայացնելու, Ատրպէյճանը հետեւողականօրէն տարբեր ատեաններում, տարբեր միջազգային կառույցներում նախապատրաստում էր այն ձեւակերպումները, որոնք այսօր տեղ գտան այդ յայտարարութեան մէջ», - ըսաւ Արզումանեան:

«Փաստ է, որ նահանջ է արձանագրուել, եւ մենք մեր դիրքերը զիջում ենք ամէն քայլափոխի: Այս ձեւակերպումները շատ վտանգաւոր են, եւ ի վերջոյ, այս նպատակը է ոչ հայաստապատ որեւէ լուծում մեզ պարտադրելու գործին», աւելցուց արտաքին գործոց նախկին նախարար Ալեքսանդր Արզումանեան:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ԾՈՊԱՆՈՒԴԻՆ

Շարունակուած էջ 1-էն

նի թղթակցի համաձայն, արարողութեան չեն մասնակցած զիւղի բնակիչները, որոնց պատուիրուած է իրենց տուններէն դուրս չգալ՝ հիւրերուն չխանգարելու համար:

Տաթևի ճոպանուղիի շինարարութիւնը տեւած է 11 ամիս եւ ընդհանուր արժէքը կազմած է 50

միլիոն տոլար: Ծրագիրը իրականացուած է Ազգային Մրցունակութեան Հիմնադրամը, բազմաթիւ հովանաւորներու օժանդակութեամբ: Ռուսաստանաբնակ գործարար Ռուբէն Վարդանեան նուիրած է 28 միլիոն տոլար:

Տաթևի վանքը կը գտնուի Գորիսի Տաթև գիւղի մօտ եւ Երեւանէն հեռու է 280 քիլոմետր:

ԼՈՒՐԵՐ

ՌԱԳՐԲ ԶԱՐՍԲՈՒՆՈՒ «ՄԻՆՉԵՒ ԶՃԱՆԱԶՈՒԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ԵՍ ԻՆՁ ՀԱՅ ԿԸ ԿՈՉԵՄ»

Այս օրերին Գրքարուեստի փառատոնի շրջանակներում Հայաստանում է թուրք մտաւորական, «Բեյզէ» հրատարակչութեան հիմնադիր-տնօրէն, մարդու իրաւունքների պաշտպան Ռազմի Զարաքունը:



Կազմակերպեցին աշակերտների, ուսանողների համար: Նոր սերնդին թունաւորում են ապատեղեկատուութեամբ: Այս առումով հիմա աւելի վտանգաւոր է, քան նախկինում, որովհետեւ եթէ ցեղասպանութեան հետ կապուած նախկինում կար լուրջութիւն, որեւէ մէկը բարձրաձայն այդ մասին չէր խօսում, տեղի հայերն էլ չէին խօսում այդ մասին՝ չվտանգելու համար իրենց կեանքը, բնականաբար երիտասարդ թուրքերն էլ այդ մասին չզիտէին, բայց հիմա աւելի վտանգաւոր է, որովհետեւ սուտ տեղեկատուութիւն են տարածում:

Որպէս թուրք մտաւորական՝ երկար տարիներ աշխատում էք հայ-թրքական յարաբերութիւնների բարելաւման, թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ: Գիտեմ նաեւ, որ շատ զրկանքներ էք կրել այդ ճանապարհին՝ թուրքիայի կառավարութեան կողմից անընդհատ հետապնդումների մէջ էք: Ըստ Ձեզ՝ վերջին երկու տարուայ ընթացքում ինչ-որ բան, այնուամենայնիւ, փոխուե՞լ է հայ-թրքական յարաբերութիւններում:

Սկսենք նրանից՝ արդեօք ես թուրք մտաւորական եմ: Այո, ես թրքերէն եմ խօսում, բայց ես ինձ դիտարկում եմ ոչ թէ թուրք մտաւորական, այլ աշխարհում ապրող մտաւորական: Ճիշդ է, իմ լեզուն թրքերէնն է, բայց եթէ ինձ հարցնէք՝ ո՞րն է Ձեր երկիրը, ես կ'ասեմ, որ իմ երկիրը Անատոլիան է, իմ հողերը Անատոլիայում են: Անատոլիայի բոլոր բնակիչներն առանց խտրականութեան իմ քոյրերն ու եղբայրներն են: Եւ եթէ իմ եղբայրը, քոյրը, ընկերը նոյն ցաւն են ապրել, նշանակում է՝ ես էլ եմ նոյն ցաւն ապրել (ի նկատի ունեմ ցեղասպանութիւնը):

Անշուշտ, հետապնդումներ եղել են, մինչեւ այսօր հնարաւոր է ինձ արդէն սպաննած լինէին, բայց չպաննեցին, որովհետեւ նոր հերոսներ չէին ուզում ստեղծել իրենց համար: Թէեւ վերջին տարիներին որոշակիօրէն թուլացել են հետապնդումները:

Իսկ առհասարակ հայի արիւն կա՞յ Ձեր մէջ:

Այս հարցը ինձ շատ յաճախ տալիս են թուրքիայում ապրող քիւրտ բնակչութիւնը, ու երանի թէ լինէի: Բայց մինչեւ թուրքիան չճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, ես ինձ հայ եմ զգալու: Այո, ես հիմա հայ եմ:

Ինչո՞վ է պայմանաւորուած հետապնդումների, ճնշումների մեղմացումը, նրանով, որ վերջին երկու տարիների ընթացքում նոյն հայ-թրքական յարաբերութիւնների, երկու ժողովուրդների երկխօսութեան առումով որոշակի տեղաշարժե՞ր կան:

Առհասարակ վերջին տարիներին թուրքիայի կեանքում փոփոխութիւններ կան թէ՛ դրական, թէ՛ բացասական առումներով: Հիմա թուրքիայի ժողովրդավարները եկել են այն գիտակցութեան, որ պէտք է տեսնել, չժխտել՝ ինչ է եղել անցեալում: Եւ վերջին երկու տարիներին Ապրիլի 24-ին միասին կարողացանք քննարկումներ կազմակերպել, բայց այս պատկերը տեսնելով՝ չկարծէք՝ թուրքիան ամբողջովին փոխուե՞լ է դրական առումով: Թուրքիան տասը տարի շարունակ Հայկական ցեղասպանութիւնը ժխտելու համար մեծ լոբբիական աշխատանքներ է տանում: Նոյն մտաւորականներից շատերը պաշտպանում են թուրքիայի իշխանութիւնների դիրքորոշումն այս հարցում, այս առումով մենք շատ քիչ ենք, Դոն Քիչոտի նման պատերազմում ենք: Տեսէք, նոյն ցեղասպանութիւնը ժխտելու համար հազարաւոր գրքեր տպագրեցին, կոնֆերանսներ, սեմինարներ

Օրինակ՝ եթէ անցեալում թուրք երիտասարդը Եւրոպա գնար եւ եթէ նրան հարցնէին՝ քո նախնիները ցեղասպանութիւն են իրականացրել հայերի նկատմամբ, կ'ապշէր եւ կ'անհանգստանար, բայց եթէ հիմա նոյն երիտասարդը Եւրոպա գնա (մանաւանդ եթէ պետական կրթութիւն է ստացել), նա կը պատասխանի, որ հայերը կոտորեցին թուրքերին: Կարծում եմ՝ սա թուրքիայի մէջ ամենակարեւոր հարցերից մէկն է: Եթէ թուրքիան հայկական հարցի վերաբերեալ ցոյց է տալիս, որ պատասխաններ, ելքեր է փնտռում, պէտք է այս վարքագծին վերջ տայ: Այնինչ մի մասնաւոր կոմիտէ է ստեղծել, որ այդ հարցերով էլ հենց զբաղուած է, այսինքն՝ ժխտել Հայկական ցեղասպանութեան հարցը:

Երբ ճանապարհային քարտեզը ստորագրուեց, այստեղ բոլորին անհանգստացնում էր այն կէտը, ըստ որի՝ պէտք է ստեղծուէր պատմաբանների յանձնաժողովը, որ պէտք է քննարկէր ցեղասպանութեան հարցը՝ կասկածի տակ դնելով ցեղասպանութեան հարցը:

Այդ յանձնաժողովը ոչ մի բան չի կարող անել, դա արդիւնք չի կարող տալ: Թուրքիան շատ սխալ քաղաքականութիւն է վարում. մի կողմից ցոյց է տալիս, որ ուզում է հայերի հետ երկխօսել, միւս կողմից ցեղասպանութիւնը ժխտելու մասին կրթութիւն է տալիս: Առհասարակ «ցեղասպանութիւն» բառը չեն պիրում թուրքիայում, եւ եթէ ձեռքներին ճար լինէր, այդ բառը կը հանէին բառարաններից, մի տեսակ հիւանդութեան պէս մի բան է նրանց համար:

Իսկ ինչպէ՞ս էք Դուք պատկերացնում երկխօսութիւնը տաբուի շուրջ: Ինչպէ՞ս էք պատկերացնում լուծումը:

Թուրքիայում Հայկական հարցն արդէն տաբու չէ, արդէն այդ մասին խօսում են, սակայն վատն այն է, որ ժողովրդի լայն զանգուածի մօտ չեն խօսում, այլ միայն ինտելեկտուալները, պատմաբանների, ակադեմիկոսների շրջանում են խօսում, իսկ ընդհանուր ժողովուրդն այս ամէնին մնում է անհարգող:

Իսկ եթէ խօսենք հայ-թրքական յարաբերութիւնների ներկայիս փուլի մասին, ապա կարող եմ ասել՝ այն բոլոր քայլերը, որոնք տեղի են

ունենում, ժամանակ շահելու միտում ունեն: Առհասարակ թուրքիայի քաղաքականութեան մէջ ընդունուած է ժամանակ շահելը, ձգձգելը. մի կողմից իբր երկխօսել է ուզում, միւս կողմից էլ նոյն քաղաքականութիւնն են տանում: Սակայն այստեղ ուզում եմ նշել, որ ես պետութիւնների մէջ, կամ գերտէրութիւնների միջամտութիւնը այդ ամէնին, առաջին դէմքերի պարագայում երբեք չեմ կարեւորում երկխօսութիւնը միմեանց հետ, այլ կարեւորում եմ պետութիւնից դուրս, այն կարող է լինել ասենք ժողովուրդների մէջ:

Մեզ մօտ, սակայն, ամէն տարի սպասում են, թէ Ապրիլի 24-ին ինչ կ'ստի Օպաման:

Ամերիկայի համար թուրքիան կարծես 50 տարուայ կիներ լինի (ժպտում է), սակայն Ամերիկայի համար նաեւ կարեւոր է Ատրպէյճանը, որովհետեւ այնտեղ նախ կայ, իսկ Հայաստանի նկատմամբ ԱՄՆ միայն արժանապատուութիւն է տածում:

Մենք, սակայն, տեսնում ենք, որ մշակութային հարցով կարեւոր եզրեր կան, յատկապէս ակտուալ արուեստի բնագաւառում:

Ժողովուրդների միջեւ երկխօսութիւնը կարեւոր է, բայց թուրք ժողովրդին պէտք է լսել սովորեցնենք, սովորեցնենք՝ ինչպէս է լինում երկխօսութիւնը: Եթէ թուրք ժողովրդին կարողանանք սովորեցնել, որ այն, ինչ ունեն թրքական թատրոնի շէնքը, լրագրութիւնը, այս ամէնը ստեղծուել են հայերի կողմից, եթէ այս ամէնը սովորեն, նրանց մօտ արդէն հարց կ'առաջանայ՝ իսկ ինչ պատահեց այս հայերի հետ: Անատոլիայի բնակչութիւնը

չգիտի՝ այդ հողերի վրայ ովքեր են ապրել: Թուրքերը իսկապէս չգիտեն՝ ինչ է տեղի ունեցել հայ ժողովրդի հետ, եւ եթէ սովորեն, կը սկսեն պրպտել: Պատկերացնում էք՝ մարդիկ ապրում են մի տեղ, բայց այդ տեղանքի պատմութիւնը չգիտեն, թուրք բնակչութիւնն իր երկիրը չի ճանաչում, քանի որ թուրքիայի պատմութիւնը պատմութեան գրքերում եւ դասագրքերում սկսում է 1923 թուականից, երբ հայերն արդէն չկան:

Ես առաջին անգամ 1993-ին հրատարակեցին ցեղասպանութեան մասին սկսեցի հրատարակումներ իրականացնել:

Իսկ եթէ թուրքիան այս քաղաքականութեամբ է առաջնորդում, ըստ Ձեզ՝ այս տեսակ յարաբերութիւններում երկխօսելը տեղի՞ ունի:

Թուրքիայի մէջ այս սիտեմը պէտք է տապալուէ: Թուրքիայի ներկայիս քաղաքականութիւնը շատ եմ նմանեցնում սովետական շրջանի քաղաքականութեանը, պարզապէս մի տարբերութեամբ՝ եթէ այնտեղ լինինիզմն է, այստեղ էլ քեմալիզմն է: Ամէն կողմ Աթաթուրքի պաշտամունքն է ստեղծուած, ինչպէս Ստալինինը: Նա մեր Ստալինն է, սա շատ ճնշող քաղաքականութիւն է:

Հաւատո՞ւմ էք դրան:

Այո: Սակայն ես հիմա արժանապատիւ ժողովրդի զաւակների մէջ եմ, ես ինձ հպարտ եմ զգում: Այսինքն՝ Դուք դեռ հայ էք:

Այո, մինչեւ չճանաչուի Հայոց ցեղասպանութիւնը, ես ինձ հայ կը կոչեմ:

ԶՐՈՒՑԵՑ ՄԻՐԱՆՈՅՑ ՊԱՊԵԱՆԸ

Հանրային

ԽՐԱԽՃԱՆՔ

ու

ՁՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝

ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ

ՄԱՍՆԱՄԻՒՂԻ

Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2010

երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104



Տոմսերու համար դիմել՝
(626) 797-7680

ՀԱՆՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ԱՄԵԱԿԻ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՈԳԵԿՈՉՈՒՄ



Շնորհիվ Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան հետեւողական աշխատանքներուն, Հաճնոյ հերոսամարտի 90-ամեակի ոգեկոչումը կատարուեցաւ իւրապատուկ միջոցառումներով:

Արդարեւ, Ուրբաթ, 15 Հոկտեմբեր 2010-ի երեկոյեան Հայկազեան Համալսարանի հետ գործակցութեամբ տեղի ունեցաւ Հաճնոյ հերոսամարտի 90-ամեակի առիթով կազմակերպուած գիտաժողովի բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ Հայաստանի մօտ Լիբանանի դեսպան Աշոտ Քոչարեանի, պետական նախարար Ժան Օղասապեանի, պետական երեսփոխաններ Սեպուհ Գալիաքեանի եւ մեթր Սերժ Թուրսարգիսեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ

Մարմնի ատենապետ ընկ. տօքթ. Մարտիկ Ժամկոչեանի, քաղաքական, հասարակական պատկան մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներու:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք յանուն Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան ատենապետ Փօլ Եագուպեան բարի գալուստ մաղթեց բոլորին: Ան ներկայացուց 90-ամեակին առիթով նախատեսուած հանդիսութիւններու շարքը, որոնք կ'ընդգրկեն գիտաժողովը, նկարներու ցուցահանդէսը, Հաճնոյ պատմութեան գիրքին վերահրատարակումը, աւանդական մատաղ-

Շար.ք էջ 17

ՀԱՆՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՏԱՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



Շաբաթ 16 Հոկտեմբերի երկուշաբթի Հաճնոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ առջեւ տեղի ունեցաւ աւանդական մատաղի պատրաստութիւնը:

Կէսօրուան ժամերուն Ս. Գէորգ եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի ունեցաւ ոչխարներու զենում: Աւելի ուշ երեկոյեան, ինչպէս միշտ, Հ.Մ.Մ.-ի փողերախումբը Հ.Մ.Մ. «Պէյրութ»-ի ակումբէն սկսաւ տողանցել զէպի Ս. Գէորգ եկեղեցւոյ մայր փողոցը:

Փողերախումբին կատարողութեամբ ազգային հայրենասիրական երգերը արդէն իսկ ճոխ միջոցով մը ստեղծած էին մատաղորհնէքին համար ներկայ գտնուող հանրութեան մօտ, որոնց մէջ զգալի էր պետական նախարար Ժան Օղասապեանի, պետական երեսփոխաններ՝ Սեպուհ Գալիաք-

եանի եւ Սերժ Թուրսարգիսեանի, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամներ ընկ. Եղիկ ձէրէճեանի եւ ընկ. Յակոբ Տիգրանեանի ներկայութիւնը:

Այս առիթով գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն բացումը կատարեց Հաճնոյ հայրենակցական միութեան անդամ Ազնիւ Ալթունեան: Ան վեր առաւ հաճնոցիներու գոյատեւելու կամքը եւ հայրենիքի սիրոյն համար զոհուելու ոգին: Այս առիթով խօսք առաւ նաեւ Միացեալ Նահանգներու Հաճնոյ Հայրենակցական Միութեան անդամ Յակոբ Կակոսեան: Ան ամփոփ ակնարկ մը կատարեց հերոսամարտի օրերուն գոյատեւելու հաճնոցիի վճռակամութեան: Այս առիթով գործադրուեցաւ գեղ-

Շար.ք էջ 17

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԷՋ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ



Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2010-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Հայկազեան Համալսարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Հաճնոյ հերոսամարտի 90-ամեակին առիթով գիտաժողով մը:

Մտաւորականներու եւ պատմաէրաններու ընտրանիի մը առջեւ խօսք առնելով Անդրանիկ Տազսեան ծանօթացուց գիտաժողովին նպատակը եւ անոր փոխանցելիք խորհուրդը գալիք սերունդներուն: Գիտաժողովի առաջին խօսք առնողը եղաւ Փարիզի Սորպոնի համալսարանին վկայեալ, Սեն Տընիի համալսարանի Ժէօփոլիթիքի ֆրանսական հիմնարկի հետազօտութեան բաժնի տնօրէն, Փարիզի Հ.Բ.Լ.Մ.-ի Նուպարի մատենադարանի տնօրէն, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ակադեմիայի անդամ, ցեղապատմութեան նուիրուած բազմաթիւ գիրքերու հեղինակ դոկտ. Ռեմոն Յարուսթիւն Գէորգեանը:

Ան ներկայացուց Հաճնոյ 1915-ի բռնազաղթը: Ա. նիստին երկրորդ գեկուցողը եղաւ «Արարատ» պաշտօնաթերթի պատասխանատու խմբագիր՝ Ահարոն Շիրազմեանը: Ան ներկայացուց գերման-թրքական փոխ յարաբերութիւնները եւ Հաճնոյ տեղահանութիւնը: Սոյն նիստին համադրողն էր տօքթ. Եղիկ ձէրէճեան: Զեկույցները աւարտելէ ետք տեղի ունեցաւ հարց-պատասխան եւ քննարկում: Կարճ դադարէ մը ետք տեղի ունեցաւ գիտաժողովի երկրորդ նիստը՝ համադրող դոկտ. Լեւոն Նորտիկեան: Փրինսթոն համալսարանէն ինչպէս նաեւ Փենսիլվանիայի համալսարանի միջազգային յարաբերութիւններու բաժնէն Մագիստրոս տիտղոսով վկայեալ բազմաթիւ պատմական ուսումնասիրութիւններու եւ յօդուածներու հեղինակ Արամ Արքուն ներկայացուց Հաճնոյ

ցեղապատմութեան մասնակցողները պատժելու փորձերը 1918-1920 ինկաժ ժամանակամիջոցին: Ներկայիս Պերլին հաստատուած Կիլիկիոյ մասին պատմական գիրքերու հեղինակ, օսմանեան հայերու ժառանգութեան վերաբերեալ, Յուշամատեն կալքէջի խմբագրութեան պաշտօնը վարող դոկտ. Վահէ Թաշճեան ներկայացուց Ֆրանսան եւ Հաճնը, անխուսափելի պարտութեան մը ռազմավարութիւնը:

Գիտաժողովին երրորդ եւ վերջին գեկուցաբերներն էին լիբանանեան խորհրդարանի նախկին անդամ, պատմական գիրքերու եւ ուսումնասիրութիւններու հեղինակ դոկտ. Եղիկ ձէրէճեան: Ան ներկայացուց Հաճնն ու իր յեղափոխական ոգին: Որմէ ետք Հայկազեան Համալսարանի ուսանողական հարցերու պատասխանատու ինչպէս նաեւ Հայկազեան Հայագիտական հիմնարկի պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տազսեան ներկայացուց Նոր Հաճնոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ սոմարները: Համադրող՝ Ահարոն Շիրազմեան: Յատկանշական էր գիտաժողովին հետեւող ունկնդիրներուն ոգեւորութիւնը: Դոկտ. Ռեմոն Գէորգեան ամփոփ տողերու մէջ կատարեց գեկուցներուն արժեւորումը:

Հայկազեան Համալսարանի տնօրէն դոկտ. Փօլ Հայտոսթեան վեր առաւ գիտաժողովին մասնակցից գեկուցաբերներուն կատարած աշխատանքը, եւ նշեց թէ մասնակիցները անխտիր լրջօրէն պատրաստած էին իրենց ուսումնասիրութիւնները եւ միաժամանակ գնահատեց ներկայներուն մասնակցութիւնը: Ան մաղթեց որ այսօրինակ գիտաժողովներ աւելի յաճախակի տեղի ունենան Լիբանանի մէջ եւ այլուր:

633 W. Glenside Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծանասակներու եւ մանուկներու Քայլափոխարկի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօզային եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի նետանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՀԱՃՈՆՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ Նուիրում է Հաճընի հերոսամարտի 90-ամեայ տարելիցին (1920-2010 թթ.)

ՎԵՐԺԻՆԷ ՍՎԱԶԼԵԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Հայ ժողովրդի ազգագրական ինքնատիպ մի խումբը վաղ ժամանակներից բնակություն է հաստատել Լեռնային Կիրիկիայի գեղատեսիլ բնութեան գրկում, որ կոչվել է Հարգան կամ Հաճըն: Վերջինս, ըստ ժողովրդական ստուգաբանության, «աճել, բնակիչներով շատանալ, բարգավաճել» բառից է ծագել:

Հաճընցիներն այնտեղ դարձելով ապրել են խաղաղ ու ստեղծագործ կեանքով: Ժողովրդական վարք ու բարքի, նրանց զբաղմունքների մասին հակիրճ, բայց չափազանց բնութագրական են մեր գրառած բազմաթիվ ու բազմազան նիւթերից հետեւեալ երգի տողերն իրենց բարբառով.

Նեմնօ տեղը եայլօ է,
Նեմնցիք բուժաղօ էն,
Կույր, ֆէղը համէ էն,
Այկինտէրբէլէ էն,
Կրիւնէրը իգիք էն,
Գէնջէրը դուռտուրաջի էն,
Ոխտիօրնիմ դայալիջի էն,
Պատվէնիմ ֆայսօն կու մանէն:
Հանրնը մամուռնը վայր է,
Հանրնցիք բուր աղա են,
Կուրք, հոզը համով են,
Աղջիկները սիրուն են,
Կահեկները կտրի են,
Մատերը կոշկակար են,
Ծերերը կլայկ կանեն,
Պատավները իլիկ կմանեն:

1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքին Հաճընի հայերը տեղահանվեցին, և նրանց մեծ մասը Տէր Զօրի անապատում նահատակվեց:

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տէրությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանադրության ժամանակ (Սաքսո-Պիկո), թուրքիայի պարտության դեպքում 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիրիկիան անցնելու էր Ֆրանսիայի հովանաւորութեանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները հայկական ազգային պատուիրակության հետ նախապես համաձայնել էին, որ եթէ հայ կամաւորները կուռեն թուրքիայի դէմ, յաղթանակից յետոյ հայերին կտրուեն քաղաքական լայն հնարաւորութիւններ, և հայ կամաւորները կը դառնան նորակազմ ինքնա-

վար Հայկական Կիրիկիայի քաղաքապահ գինուորներ:

Ուստի թրքական բանակից, աքսորի ճամբաներից ու տարբեր վայրերից, նոյնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսապցի, հաճընցի, հուսենիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլք) գինուորագրուեցին և ֆրանսական բանակին՝ ստեղծելով Արեւելեան (Հայկական) լեգիոնը: Հայ կամաւորներն իրենց անմեղ նահատակ հորազատների վրէժով լցուած, արհամարհելով մահը, պարտութեան են մատնուած թուրք-գերմանական զորքերին՝ նուաճելով Արարայի փայլուն յաղթանակը Նաբուլուսի՝ Պաղեստինի մօտ: Պատմական այդ իրադարձությունները ևս իրենց գեղարուեստական արտացոլումն են գտել ժողովրդական երգերի մէջ.

Մէկիկ-մէկիկ հաշուեցի չորս տարիմ,
Հայ կամաւորները Նաբուլուսը գրաւեցիմ.
Հայերը հազար հինգ հարիւր հոգի էին.
Անգլիացիմ, ֆրանսացիմ ապշեցիմ:

Եւ իրօք, հայ քաջարի լեգիոնականներն արժանանում են ֆրանսական և բրիտանական հրամանատարութեան զրուստանքին: Գեներալ Ալեմբերն, 1918 թ. Հոկտեմբերի 12-ին, հայ ազգային պատուիրակության նախագահ Նուպար Փաշային յղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զորամաս ունենալուս համար: Նրանք կուռեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ»:

Պատերազմից յետոյ կնքուած Սեւրի պայմանագրով Կիրիկիայի վրայ հաստատուելու էր Անտանտի երկրների հսկողութիւնը, և թրքական զորքերն իբր արդէն դուրս էին բերուելու Կիրիկիայից: Տէր Զօրի, Ռաս ու Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկուած, ուժասպառ, հիւժուած և ունեզրկուած հայ աքսորականները աստիճանաբար գալիս, տեղաւորուեցին Կիրիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ յոյսով ու հաւատով, սկսում են վերականգնել աւերուածը, մշակել խոպանացած աչքիները: Սակայն թուրքերին չաջողուեւ է լեզու գտնել դաշնակից տէրութիւնների հետ և ստիպել ֆրանսացիներին՝ խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիրիկիայից:

Ֆրանսական գինուորական վարչութիւնը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկուած հայերի անվտանգութիւնն ապահովելու ուղղութեամբ, այլև տեղերում իշխանութիւնը թողնում է թուրք գինուորական պաշտօնեաների ձեռքին, և նրանք չեն գինաթափուում:

Չճանաչելով Սեւրի պայմանագիրը և օգտուելով ֆրանսական գինուորական վարչութեան անվճարականութիւնից և թուլութիւնից, թրքական զորքերն ու տեղի չեթեներն իրենց գէնքն ուղղում են Կիրիկիայի հայութեան դէմ:

1920 թ. Յունուարից թրքական զորքերը գրոհում են Կիրիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տեւող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի հայերը կոտորուեւ են ու մոխրացուեւ:

Պատմական այդ սահմուկեցուցիչ իրադարձությունների անմիջական տպաւորութիւնների տակ է յորինուել ժողովրդական սեղմ, բայց պատկերաւոր երգը.

Աւաղ, Մարաշիմ Մարաշ են ասում,
Մարաշ, Բեգ ինչպէ՞ս են Մարաշ ասում,
Երբ քո մէջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մէջ՝ հայեր մոխրացում:

Մարաշի կոտորածին գոհ են գնում շուրջ 13.000 հայեր: Այնուհետև ողջ մնացած 8.000 մարաշցիներ Ուրֆայի 6.000 հայ բնակչութեան հետ բռնում են գաղթի ճամբան՝ սաստիկ բուքին ու սառնամանիքին անհաշիւ գոհեր տալով ճանապարհին:

1920 թ. Ապրիլի 1-ին թուրքերը պաշարում են Այնթապը: Պատերազմի աւարտից և գինադադարից յետոյ այնտեղ վերաբնակուած շուրջ 10.000 այնթապցիների և 8.000 սեբաստացի հայ գաղթականների հազիւ խաղաղուած կեանքը նորից է փոթորկուում: Այնթապի հայերն անցնում են ինքնապաշտպանութեան: Տեղում Ազգային միութեանը կից ստեղծուեւ է Զինուորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լեւոնեանի ղեկավարութեամբ: Վերջինս հաշուառման է ենթարկուեւ եղած 750 կուռուղների գէնքն ու գինամթերքը և կազմակերպում ուումբեր պատրաստելու գործը:

Պատմական այդ իրադարձությունների ականատես-վկայ այնթապցի Սանդուխտ Հեքիմեանը (ծն. 1908 թ.) ներշնչանքով է մեզ պատմել իր տեսածները. « 1920 թ. Այլ

Քըլընջն ահուկի գորքով յարձակուեց Այնթապի վրայ: Այնթապի ինքնապաշտպանութեան ղեկավարն էր Ադուր Լեւոնեանը: Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տուաւ, որ բոմբաներ շինեն: Ան իր կամաւորներով յարձակուեցաւ թշնամու վրայ և դուրս եկաւ պաշարումէն: Այլ Քըլընջի 24.000-ի համող գորքը մեկ գիշերուա մէջ սարսափահար ետ փախաւ՝ «Գեաւուրըն գէօգիւնիւ քան դօլդու» (Հայու աչքն արիւն լցուեց) գողալով, որ կը նշանակէ՝ հայերը վրէժով լցուեցին: Մեր Այնթապում Ադուր Լեւոնեանի վրայ այս երգը հանել էին.

Ադուր փաշա, ոտքի՛ ելիր,
Կահիղ կրակը վառի՛ր,
Թուրքերը գրոհում են՝
Կամաւորներով արշաւի՛ր:
Այդ ընթացքում Կիրիկիայի գրաւման ընդհանուր հրամանատար Գոգան օղլու Դոդան պէյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկուել էին միայն 6.000-ը:

Դոդան պէյն էլ եկաւ, մտաւ Հանըր...
Ափսո՛ս եղաւ Բեգ, հսկայ Հանըր...
Այնտեղ թաւանեցին մեր ունեցումսը...

Ոտատակ գնաց անտէր հայը:
Հակառակորդի կարծիքով՝
«Կիրիկիոյ հայկական միջնաբերդը՝
Հաճընը, հիմնովին կործանելն ու
բնաջնջելը մէկ ժամուայ գործ էր և
աննշան յարձակումով մը պիտի
կրնան թաղել 6.000 հայութիւնը»:
Սակայն հաճընցիները լի էին վճռականութեամբ: Նրանք իրենց կառավարիչ, փաստաբան Կարապետ Չալեանի ղեկավարութեամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանութեան բարձրագոյն խորհուրդը: Պաշտպանութեան հրամանատար են ընտրում Զօրավար Անդրանիկի գինակից սպայ Սարգիս ձեպեճեանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծեակից բաղկացած հեծելազոր: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների: Փորում են խրատատներ և այլ ամրութիւններ, մարտական տրամադրութիւնը համակում է բոլորին: Ամէնուրեք հնչում են ազատասենչ երգեր.

Յառա՛ջ, յառա՛ջ, հանրնցիներ,
Մեր ոխերիմ բուրքն է եկեղ,
Յառա՛ջ, կոռու՛նք՝ ի գէն, ի գէն,

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p>
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning

Եւ երբ, մեր յոգնած, տառապած եւ յաղթանակի ծարաւ հոգիները, մանաւանդ սփիւռքահայ հոգիները, սառած աչքերով հեռուները գիտելով կ'երագէին վերադարձը մեր բունագրաւուած հողերուն, մեզմէ խլուած աջէն ու ձախէն, վերէն ու վարէն, Հայաստանցի հայը, երկու հազար տարուայ մէջ առաջին անգամ ըլլալով, ԻՍԿԱԿԱՆ յաղթանակ կը տանէր պատերազմի մէջ եւ վիրաւոր Ղարաբաղ ազատագրելով մեր ազգային արժանապատուութիւնը կը վերականգնէր:

Թէ ինչու՞ այսքան կը գովեմ Հայաստանցի հայը:

Գովերգութիւնս կը բխի ազգային գիտակցութենէս եւ անձնական փորձառութենէս:

Լիբանանահայերս, մանաւանդ իմ սերունդը, 1955-էն դէպի 1975 երկարող տարիներուն, գաղթականութեան ճահճացած հոգեբանութենէն դուրս բերուեցանք Հայաստանէն մեզի հասնող լուրերով կամ այցելութիւններով:

Հպարտութեամբ լեցուեցանք Միկոյեան եղբայրներով, Ալիխանեան եղբայրներով, Համբարձումեանով կամ Բաղդամեանով:

Մեր հոգիները հրճուեցան ու

մնանեցան Ալթունեանի Երգի ու Պարի Անսամպլի ելոյթներով, եւ Սպարտակ՝ ապա Արարատ Ֆուլպօլի խումբի յաղթանակներով:

Եւ յետոյ կոթողներ Ծիծեռնակաբերդի եւ Սարտարապատի:

Եւ յետոյ սփիւռքահայ գաղութներ ճոխացնող եւ հարստացնող բազմաթիւ Հայաստանցի արժէքներ, գրական, երաժշտական եւ արուեստի մարգերէն ներս:

Հայրենիքի սրտի զարկերով զարկ առին մեր սրտերը:

Այի մը հայրենիքը մե՞ծ էր այլեւս մեր հոգիներուն, սրտերուն եւ երագներուն մէջ:

Քիչով շատ բան շինող եւ ոչինչէն ամէն ինչ մէջտեղ բերող Հայաստանցի հայն է եւ հանճարեղը, եւ ճարտարագործը եւ շինարարը:

Մէկ մուրճով ու գամով տուն շինողն է Հայաստանցի հայը: Այսքան գովերգութիւն ազգային գիտակցութեամբ:

Իսկ ինչ կը վերաբերի անձնական փորձառութեանս, անվարան կը խոստովանիմ, որ հայաստանցի հայերու վստահած եմ յաճախ իմ տան կամ ինքնաշարժի կամ այլեւայլ հարցերու նորոգութեան կամ շինութեան պէտքերը:

Հայաստանցի հայուն վստահելով կրցած եմ շինել տալ այն ինչ որ ուրիշներ չեն կրցած շինել կամ ալ անկարելի նկատուած գործեր կարելի դարձնել:

Գործեր յանձնած եմ Հայաստանցիներ՝ Գէորգին, Արային, Արարատցի Գագիկին:

Հիացած եմ անոնց ուշիմ եւ վարպետ գործառնութեան վրայ:

Ոչինչ մսխելու եւ ամէն ձեւով գործ յաջողցնելու կամքն իրենց աննման է ու եզակի:

Չկայ բան կամ գործ որ անկարելի է իրենց համար:

Ու եթէ կարգ մը տեղեր անոնք իրենց հմտութեամբ եւ ուշիմ ուսումնասիրութեամբ երբեմն նիւթական անորէն շահարկութիւններ կ'ընեն..... հալա՛ւ ըլլա՛յ իրենց:

«Սալօնի Չօճուխներ» կոչուող մեծապատիւ գողեր ինչէր չեն ըներ պետական գանձը կողոպտելով:

Ու եթէ կարգ մը տեղեր ոճրագործներ բանտեր կը լեցնեն հաճեցէք անառակ որդիի օրինակով ամբողջ ընտանիքի մը անունը չարատաւորել:

Հանճարեղ, ճարտարագործ եւ շինարար է Հայաստանցի հայը:

Հոգին սիրեմ Արարատցի Գագիկին:

Եւ իր ընդմէջէն ամէն Հայաստանցի հային:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

«ՓԱՌՔԸ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ»

Ռ. ԿՈՐԻԼՆԻ

Ծ.Խ «Մասիս»-ի Հոկտեմբեր 9, 2010 թ. համարով, լոյս ընծայեցինք Ռ. Կորիլենի՝ Մշակույթի Ամսուան առիթով գրած «Փառքը Մեսրոպ Մաշտոցի» մէկ ծաւալուն քերթուածէն շարք մը տուններ միայն, տեղի սահմանափակումներով չեն պատճառաւ: Այս ու գալիք մի քանի թիւերով, յաջորդաբար պիտի տանք իր ամբողջութեան մէջ: Կ'ապաւինինք մեր սիրելի աշխատակիցին բարեացակամութեան:

Տարօն գաւառի Հացեկաց գիւղում,
Շինական Վարդանի ընտանիքում,
Յամի տեան 360 թուականին,
Մի մանուկ ծնւեց:

Նրան կոչեցին Մեսրոպ անուն,
Յետոյ անուն-ազգանուն ընդելուզուած,
Ոնց ջահը ժամի լոյսերով փնջուած,
Յորջորջւեց Մեսրոպ Մաշտոց անուն:

Նրա տաղանդն ու ձիրքն անթելուած,
Մի օր պիտ թռնկէր ի սէր հայութեան,
Ողջ Հայաստանը լուսաւորէր,
Հայոց համար ճակատագիր նշտէր:

Հայրենի գրկումնա հասակ նետեց,
Ժամանակի ֆանի լեզուներ տիրապետեց,
Լցւեց գիտութեամբ ու տրամաբանութեամբ՝
Մեծ գործին պատրաստ առաջնութեամբ:

Հայրենիքին ծառայելու միտքով յղացաւ,
Ամենայն սրտով ու հոգով խոստացաւ,
Ոչ մի գնով չխնայել իր ունակութիւնը
Ի սպաս դնելու իր կարողութիւնը:

Նա երբեք չընկրկեց իր որոշման մէջ,
Քաջ ու պատուական իր սիրոյ մէջ,
Քայլերն ուղղեց դէպի Վաղարշապատ՝
Հայոց Վոստիկայի արքայի պալատ:

Արքան գոհութեամբ նրան ընդունեց
Տեղեկ նրա խելիքն արձր գիտութեան,
Արքունի դիւանում նրան պաշտօն յանձնեց
Սպասաւոր կարգերին հազարապետութեան:

Նա իր ծառայութեան տարիներում,
Արժանի տեղ գրաւեց սրտերում,
Սիրելի դարձաւ գորականներին,
Գովելի անձ պալատականներին:

Դիւանապետութեան յոյժ կարի գործում
Նա շատ քաներից էր իրագրել դառնում,
Տեսնում էր օտար տիրակալներն երկրում,
Ինչ աղէտ ու չարիք է որ չեն իրագործում:

Յունաց եւ պարսից ենթակայ երկիր,
Խեղճ ու թշուառ ժողովուրդը մեր,
Անպաշտպան օտարի յոյսին լիւնած,
Ձուլման վտանգին ենթարկուած:

Հոգին տրտմեցաւ Մեսրոպ Մաշտոցի,
Սիրտը նմութեց վիճակից երկրում՝
Մեր թագաւորը վասալ պարսից արքային
Երկիրը բաժանուած երկու մասերի:

Լքեց արքունի զինուորական ծառայութիւնը,
Միայնակեցութեան հոգեւոր կեանք ընդունեց,
Մոռացութեան տեղ ֆունն ու հանգիստը,
Խստամբերութեամբ կեանքին յանձնեց:

Նա հոգսերի ծփանքում որոշում արաւ,
Դէպի հայրենի գաւառներ նամբայ ելաւ,
Տեսաւ քրիստոնէութեան լոյսն անբաւ,
Գողթան գաւառում նոր միտք արաւ:

Յունաց եւ ասորաց աղօթագրքերը
Անհաղորդ էր դարձրել նոր կրօնի սէրը,
Լեզուն կաղապարող տառեր էր պէտք,
Սեփական լեզուով դպրութիւն էր պէտք:

Տառապանք հոգու միտքը ծնւեց՝
Սէր հայութեան ոգեւորւեց,
Վառ յոյսերով գօտեպնդւեց,
Տառեր ստեղծելու գործին լծւեց:

Ահա այդ մտքով Սահակի մօտ շտապեց,
Սահակը վեհ կաթողիկոսն հայոց ազգի
Ուշադիր լսեց այն ինչ Մեսրոպ գեկուցեց,
Ապա արին որոշում գնալ դուռն արքայի:

Այսպէս նրանք հաւատով խորհրդակցաբար:
Ասեմանագեան ազգի նկատագրով տարուած,
Թագաւորի մօտ գնացին անհրաժեշտաբար,
Խնդիրքը յայտնեն անյոյս գալիքին կապուած:

Հայ լեզուի նշանագրերի հարցն էր դրոււմ,
Ինքնուրոյն դպրութեան կարիքն էր մղոււմ,
Որ դէմն առնէր օտարների ֆարոգչութեան,
Որ պաշտպան կանգնէր ազգի ինքնութեան:

Թագաւորը բարեմիտ լսեց նրանց խօսքերը,
Խիստ կարեւոր նկատեց նրանց առաջարկները,
Ապա յայտնեց, թէ՛ տառեր կան գտնուած,
Ոմն ասորի Դանիէլի մօտ պահուած:

Թագաւորի հրամանով ոմն արքունի Վահրին
Բերելով արքայութեանը Մեսրոպին յանձնեց,
Նա անապի ուրախութեամբ կատարուած գործից
Մեծ նուիրումով քանակաւ աշխատանքի լծւեց:

Վոստիկայի թագաւորը սրտցաւ ու արի-
Քաջ ըմբռնում էր ֆաղափականութիւնը երկրի,
Ուստի բաց արաւ արքունի գանձատան դռները
Նիւթապէս ապահովելու սկսուած գործերը:

Դանիէլեան տառերով փորձեր արեցին,
Մատղաշ մանուկներին սովորեցրին,
Երկու տարի նրանցով ջանք թափեցին,
Բայց աւաղ ոչ մի արդիւնք չհասցրին:

Մեսրոպ հրաժարեց Դանիէլեան տառերից,
Քանգի խորք էին հայոց լեզուի հնչիւններին,
Նրանք յարուցեալ էին օտար դպրութիւնից,
Անհամահնչիւն մեր լեզուի սիդորաներին:

Երբ հեթանոս էին պետականութեամբ գործել էին,
Սեփական դպրութեամբ եւ կրօնով ինքնուրոյն էին,
301 –ին նորին կառչելով թուլացանք եւ տկարացանք,
Կորցրինք անկախութիւն, դպրութիւն եւ ենթակայ դարձանք:

Մեր ազգը մշակոյթով հարուստ եւ հին,
Հեթանոս դարերում դպրութեամբ լի,
Ինչ պատահեց որ նա դրանից գրկւեց,
Եւ նորն ունենալու փնտրտուք կատարեց:

Ահա արդիւնքն էր այն կործանիչ արարքի,
Որ կատարեց անունովը նոր կրօնի,
Հրկիզեց ու վերացւեց դպրութիւնը մեր հին՝
Յիշատակները դարաւոր մեր պապերի:

Մեսրոպ չհրաժարեց իր մտքերից,
Այլ՝ ամուր հաւատով սիրալի-
Անյողողող կառչած իր ուժերից
Շարունակեց գործը անդրդելի:

Նա թագաւորի հրամանով եւ կամօքն Սահակի
Իր հետ առնում է մի խումբ աշակերտներ՝
Յովնան, Յովսէփ, Եզնիկ, Կորիւն, Վահան...
Ուղեւորում է սահմանակից ֆաղափներ:

Ամիդ եւ Եդեսիա դպրութեան ֆաղափներ,
Ասորաց լեզուի նանաչուած կենտրոններ,
Ուր Մեսրոպ իր խմբով այնտեղ ֆամբողքեց,
Ապա անդ՝ Եդեսիայում հաստատուեց:

Նա աշակերտներին երկու խմբի բաժանեց,
Եդեսիան դարձաւ մէկ խմբի ուսման կայան,
Ուր կարիք էր նրանց սերտեն լեզուն ասորաց,
Ապա թարգմանութեամբ գարկ տան ազգիս դպրութեան:

Միւս խմբին Յունաց Սամոսատ ֆաղափը դրկեց,
Որ այնտեղ Յունաց դպրութեան վարժեն,
Իսկ ինքը Եդեսայում լեզուներ ուսումնասիրեց,
Կարգաց, պրպտեց ու ֆննեց անթիւ մատեանք:

Եդեսիա՛, Եդեսիա՛, դու ֆաղափ հնադարեան,
Տիրան Բ. մեծի կառուցած ֆաղափ հայկական,
Խաղաղակալի պէս շատ-շատերի ձեռք ես անցել
Բազում անգամ Կործանել ես եւ վերակառուցել:

Եդեսիա՛, Եդեսիա՛, գրուած է՝ ֆո թագաւորները հայեր են եղել,
Արգար թագաւորը ծանրօրէն հիւանդ Յիսուսին է խնդրել,
Սակայն Մեսիան խոստացել է աշակերտներից ուղարկել,
Երբ նրանք տեղ են հասել թագաւորին վախճանուած են գտել:

Եդեսիա՛, Եդեսիա՛, ֆո գեղեցկութեան եւ կործանումիդ ողբն է գրել
Մեծն Ներսէս շնորհալին՝ «Ողբ Եդեսիայի» նշանաւոր պոէմայով:
Նաեւ այն կուում հայկական գորագնդի հերոսների գովքն է արել,
Նրանց արիւթիւնը Վարդանանց նահատակների հետ չափելով:

Ն. ԿԱՃԱՌԵԱՆ (ՅԱԿՈԲ ԹԵՃԻՐԵԱՆ), «ՏԻՍՈՒՐ ՅՈՒՇԵՐ»

տպ. «Մշակ», Պեյրուֆ, 1970, փոքր չափի 80 էջ

1) 1915ին, էջ 16-33:

Սեյիմիի քաղաքը կը գտնուի Համայնի եւ Հոմսի միջեւ: Արհաւիրքի օրերուն ան եղած էր մեծ մասամբ այնթապցիներու գաղթակայանը: Այստեղի ազնիւ արաբներու բարեացակամութեան եւ հիւրասիրութեան շնորհիւ հայ գաղթականները տանելի կեանք մը կ'ունենան, ինչը չի սպրդիր թուրք ղեկավարութեան աչքէն: 1917ի սկիզբը էնվեր փաշան կը դրկուի շրջան՝ կացութիւնը ուսումնասիրելու (մանաւանդ Դամասկոսի շրջանին մէջ) եւ արաբները հայերը ջարդելու գրգռելու համար: Արաբները ծուղակը չեն իյնար եւ էնվեր ձեռնունայն կը վերադառնայ:

Հեղինակը իր ծնողքին հետ Սեյիմիի ապաստանած էր: Հայրը՝ Նազարէթը եւ մօրեղբայրը՝ Միհրան Թերզիպաշեան, երկուքն ալ գինուորացու, փախստական կ'ապրէին: Իրենց դրացի՝ բարի արաբ կին մը կար, որ երեք զաւակ ունէր: Դուստրը՝ Ջեննուպը եւ կրտսեր որդին՝ Ալին հիւանդութենէ մեռած էին: Կը մնար միայն մեծ տղան՝ ձաաֆար, որ բանակ գացած էր:

ձաաֆար բանակէն փախուստ կու տայ երրորդ անգամն ըլլալով եւ տուն կու գայ: Մայրը կը գուրգուրայ անոր վրայ: ձաաֆար ընկերներով թաքստոց կը գտնէ մօտակայ հովմէական բերդին աւերակներուն մէջ: Հրահանգ կար ոստիկաններուն, որ զայն գտնելու պարագային տեղն ու տեղը գնդակահարեն:

Ծննդավայր Այնթապ եղած ատեն հեղինակին հայրը հինգ զաւակներու տէր էր: Նուպար անունով եղբայրը կը հիւանդանայ եւ կը մեռնի: Երբ նոր տեղահանուած էին, կը հիւանդանայ փոքր քոյրը՝ Վարդուհին եւ կը մեռնի:

Սեյիմիէի մէջ հայրը կը հիւանդանայ: Մայրը չդի վիճակով դժուարութեան կը մատնուի, սակայն դրացուհին՝ Ըմ ձաաֆարը (ձաաֆարի մայրը) հոգ կը տանի անոր: Հայրը՝ Ապու Եագուպը (Նազարէթ) երկու ամիս՝ Ֆակկարի Ավէյնի ագարակը, իր եղբօր մօտ մնալէ ետք կը կազդուրուի եւ տուն կը վերադառնայ: Եագուպ իր եղբօրը բարեկամ թեմի էֆենտին կարգադրու-

թեամբ վեսիգա (արտօնագիր) կը ստանայ եւ իր խանութը կը բանայ: Սղութեան եւ անգործութեան պատճառով, Նազարէթի քսակը պարպուած էր: Մօր գարդեղէնը կը վաճառեն ապրելու համար: Մօրեղբայրը կարելի եղածին չափ կ'օգնէ իրենց: Այս միջոցին, մայրը կը ծննդաբերէ:

Տասնհինգ օր ետք, օր մը, յանկարծ թաղին հայ մուխթարը եւ երկու ոստիկաններ կու գան, տան բակին մէջ կը տեսնեն հայրը, կը ձերբակալեն եւ սերայ (կառավարչատուն) կը տանին: Մայրը, նորածինը գիրկին, կ'ընկերանայ հօրը: ձամբան մայրը կը մերժէ կաշառք տալ: Ան կ'ակնարկէ թրքացած իր քեռայրին՝ Ահմէտ էֆենտիի (Ռուբէն Եկաւեան) միջնորդութեան: Ոստիկանները եւ մուխթարը վախնալով այս ազդեցիկ մարդէն՝ Նազարէթը ազատ կ'արձակեն:

Երկու օր ետք, խանութին մէջ, ոստիկան մը կը ձերբակալէ հայրը, որ սերայ տարուելով կը բանտարկուի: Բանակէն փախած եւ ձերբակալուած հայերն ու արբանները Դամասկոս կը տանին: Նազարէթ Թեճիրեան կը մեկնի անվերադարձ: Գրել-կարդալ գիտնալուն համար, բանակին մէջ Նազարէթին պաշտօն մը կուտան: Սակայն, աշխատանքը տաժանակիր էր: Ան կը հիւանդանայ եւ Դամասկոսի Մուհաճիրինի պողոտային վրայի հիւանդանոցը կը տարուի, ուր թուրքերը կը թունաւորեն զայն ու կը մեռցնեն 36 տարեկանին: Մայրը 29 տարեկանին կ'այրիանայ:

Նախքան Նազարէթի մահանալը, հիւանդանոցին մէջ անակնկալ դիպուածով մը ան Օսման անունով ծանօթի մը կը հանդիպի: Հաճար գիւղացի այս քաջ եւ հաւատարիմ մարդը իրենց այգիները եւ պարտէզները խնամող հողագործին կիսորդն (օրթախ) էր: Օսման Նազարէթի կ'առաջարկէ օգնել եւ փախցնել գինք Հաճար գիւղը եւ ընտանիքն ալ հոն բերել:

Նազարէթ կը պատասխանէ. - Օսման, հայրան, պետութեան դէմ դաւաճանել չ'ըլլար:

2) Մասունցի Պեքար Արոյին Պատմութիւնը, էջ 34-49:

Շար.ը էջ 19

ԻՆՉՊԵՍ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՒ ԻՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ (Խօսուած՝ Թորոնթոյի Թ.Մ.Ս. սրահին մէջ 18 Սեպտեմբերին)

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Պատանեկութեան օրերէն արդէն երեւան եկած էր հակուս գրականութեան հանդէպ: Տակաւին Մելգոնեան կրթական հաստատութեան մէջ ուսանողութեան շրջանին խմբագրեցի «Նոր Սերունդ» անունով ձեռագիր պարբերաթերթ մը, որ իմ եւ հասակակից տղոց եւ աղջիկներու գրական փորձերուն բեմը հանդիսացաւ:

Սակայն կեանքի ասպարէզ մտնելէս յետոյ խստապահանջութիւն մը ծնաւ մէջս, որ արգելք կ'ըլլար գրելուս: Գրածներս սեփական գրաքննութենէս՝ յար եւ նման ուրիշներու գրածներուն: Այդ տարիներուն, 1946ին սկսեալ դէպի Հայաստան կատարած ներգաղթն ալ առաւ նիւթ հայթայթեց հայրենասիրական գրականութեան, բայց այդ մասին գրածներս ալ նորութիւն չունէին, ինքնատուութիւն չկար:

Մշակելիք գրականութեան համար հանգրուանային անկիւնադարձ մը եղաւ Եթովպիա հրաւիրուելիս՝ իբրեւ ուսուցիչ ծառայելու համար հայոց դպրոցին: Նոր աշխարհ մը բացուեցաւ առջեւս՝ ափրիկեան էքզոթիք եւ հարուստ բնական ու կենդանական աշխարհը: Ահա նոր նիւթ՝ սփիւռքահայ գրականութեան համար: Ինքնատիպ: Մինչ այդ արդէն հիացումով կը կարդայի հայրենիք գրող Վախտանգ Անանեանի որսորդական եւ արկածախնդրական համով-հոտով պատմուածքները՝ լայն կարկինով եւ խոշորացոյցով դիտուած: Փոքրիկ Հայաստանը Ափրիկեան երկրի մը բազմաթիւ մասերէն կենդանական աշխարհ կրնար ունենալ. հազուադէպ արջ եւ քարայծ, որոնց որսորդութիւնը վիպական հերոսութեան պէս կը պատմուէին վարպետին կողմէ:

Եւ անոր օրինակին հետեւելով ծնունդ առաւ իմ որսորդական-արկածախնդրական գրականութիւնս: Ափրիկէն ինծի տուաւ նաեւ ուրիշ նոր նիւթ մը՝ խառն ամուսնութիւնները եւ անոնց յառաջացուցած դժբախտութիւններն ու բարդ հարցերը: Մինչ այդ մեր ապրած երկիրներուն մէջ մեր տեսած խառն ամուսնութիւնները մտահոգութիւն չէին պատճառած, նախ որովհետեւ

թիւով քիչ էին եւ ապա՝ հայը արաբի, ֆրանսացիի, կամ օրինակի համար ամերիկացիի հետ կ'ամուսնանար, այսինքն ճերմակը ճերմակի հետ: Իսկ Եթովպիոյ մէջ պատահածը տարբեր խառն ամուսնութիւն էր՝ ճերմակը սեւի հետ, յառաջ բերելով մարդկային նոր տեսակ մը խառնածինը, որ նոյնպէս ինքնատիպ նոր նիւթ հայթայթեց ինծի: Ընկերային բարդ հետեւանքներ պատճառող այս հարցին առթիւ, ի պատիւ հայ կիներուն, պէտք է ըսեմ որ հայ կինը սեւ ամուսին չունեցաւ ընդհանրապէս, այլ այդ մարդն է որ սեւ կիներու հետ կենակցելով, կամ օրինաւոր ամուսնութեամբ խառնածին սերունդը յառաջ բերաւ:

Դարձեալ Եթովպիոյ կը պարտիմ ուրիշ նոր նիւթ մը՝ խաղամուլութիւնը, որ անշուշտ միայն Եթովպիոյ յատուկ չէ, բայց հոն պարարտ հող եւ ընդհանրական ընդունելութիւն գտած էր ընդհանրապէս զբաղումի պակասի եւ տնտեսական բարօրութեան պատճառով:

Ահաւասիկ այն բոլորը, որ իմ 5-6 գիրքերուս նիւթ հայթայթեցին:

Ապա ես մտայ հրապարակագրական ասպարէզ, որ վերջ ու սահման չունի, այնքան ատեն որ գրող մը կը հետեւի ազգային ու միջազգային ընկերային-քաղաքական կեանքին: Այս մասին (որ նուիրուած է վերջին Զրդ գիրքս՝ «Ճիւղակար»-ը, որ կ'ամփոփէ 1957-2009 երկարող աւելի քան կիսադարեան հրապարակագրական յոգնածներուս հազիւ թէ կէսը՝ 671 էջերով, այս գիրքին ներկայացումը եւ վերլուծումը կատարեց պրն. Յակոբ Ալթունեան, որուն պարտական եմ շնորհակալութիւն յայտնել գիրքիս մասին իր կատարած խոր վերլուծումին եւ արտայայտած իր գնահատանքին համար, որոնք եթէ նոյնիսկ չափազանցուած էին, պարկեշտ մարդու ուղղամիտ համոզումներն էին: Ես ուրախ եւ հպարտ եմ յիշելով որ Հ.Բ.Ը. Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին անդամակցած են եւ քանի մը տարեշրջան ալ գլխաւորած ենք զայն, համերաշխ եւ արդիւնաւէտ գործակցութեամբ:

ՍԵՓԱՆ ԱԼԱԶԱԶԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՀՈՒՆՉՔԻ (2005-2009) ՆԵՐԿԱՅԱԳՈՒՄ

ԹԻՎԵԱՆ Մշակութային Միութեան
Լուս Անճելոսի մասնաճիւղը

Սիրով կը հրատարակուի

ՍԵՓԱՆ ԱԼԱԶԱԶԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀՈՒՆՉՔԻ (2005-2009) ՆԵՐԿԱՅԱԳՈՒՄ

Զեկուցողներ՝
ԳԵՌԳ ՔՐԻՍՏԻՆԵԱՆ - «Պատմութիւն»
ՀՐԷՉ ՍԵՓԵԹՅԵԱՆ - «Հայ Մամուլի Էջերուն»
ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԵՐԵՏԵԱՆ - «Յորձանուոր»

Հանդիսավայր՝
ՎԱԶԷ ՍԵՄԵՐԵՏԵԱՆ

ՈՒՐԵԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 5, 2010
Երեկոյան ժամը 8:00-ին

ՎԵՆՏԵՅԼԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ
222 E. Harvard Avenue - Glendale
Validated parking at Marketplace parking structure
Harvard & Maryland

ԳԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՏԸ ԱԶԱՏ

ԸՆԿՈՅՁՆԵՐԸ՝ ՎԱՐՎԱՆԵՐԻ, ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒԻՄՆԵՐԻ ԵՒ ԴԻԱԲԵՏԻ ԲԱԼԱՍԱՆ

Աշուն է, նշանակում է, որ շուկան աստիճանաբար հարստանում է մթերքներով, որոնք պէտք է պահեստավորել ձմռան համար: Հնարաւոր է նաեւ, որ աշնանը քրոնիկական հիւանդութիւնների սրացում լինի: Իսկ այսօր պահեստավորած մթերքը կարող է նաեւ բալասան ու սպեղանի դառնալ: Հիւանդութիւնից բուժուելու համար, իհարկէ, կարելի դեղորայք ընդունել: Սակայն կարելի է առողջութիւնը վատահել ընկոյզներին: Երկար ժամանակ ուսումնասիրուել է ընկոյզների դրական ազդեցութիւնը: Ստորեւ ներկայացնում ենք ընկոյզների օգտակար յատկութիւններն ու դրանց կիրառութիւնը որոշ հիւանդութիւնների դէպքում:

Գաղտնիք չէ, որ մարդկանց մեծ մասը ճիճուային հիւանդութիւններ ունի: Ընկոյզի կեղեցից պատրաստուած դեղորայքները ոչնչացնում են մանրէները, ստրեպտոկոկերը, ստաֆիլոկոկերը, վերացնում են սնկերը (կանդիդոզա եւ միկոզա), ինչպէս նաեւ տրիխոմոնադները, ճնշում թոքախտի ցուպիկը:

Կեղեւը՝ տղամարդկանց
Ի տարբերութիւն աւանդական բժշկութեան (ընկոյզների հիմքով պատրաստուած դեղամիջոցները շատ չեն), ժողովրդական բժշկութեան մէջ դրանք աւելի լայնօրէն են կիրառուում: Ընկոյզներն արեան մէջ նուազեցնում են շաքարի պարունակութիւնը, մաքրում են թաստամոքսային գեղձը, կարգաւորում նիւթափոխանակութիւնը, օգնում պայքարելու վարակների դէմ, առաջարկում մաշկային, ստամոքսաղիքային, քիթ-կոկորդի, գրիպի, բրոնխաթոքային եւ շատ այլ հիւանդութիւնների դէպքում: Ընկոյզի կեղեւը բնական մանրէասպան միջոց է:

Բուժիչ ընկոյզներ
Հնդկական ընկոյզն օգնում է փորկապութիւնների, սրտային հիւանդութիւնների, արեան բարձր ճնշման, սակաւարիւնութեան դէպքում: Տերեւներն օգտագործում են թէյախոտի փոխարէն, ինչպէս

նաեւ մաշկային, կոկորդային հիւանդութիւնների դէպքում (ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին ընդունման համար):

Մայրի ընկոյզը բարձրացնում է իմունիտետը, պահպանում թարմութիւնը: Պարունակում է հակաօքսիդանտներ, աւելացնում արական ուժը: Ընկոյզներում պարունակուող իւղը լուծում է խոլեստերինային գոյացութիւնները (դրա համար հարկաւոր է օրական մէկ գդալ առնուազն մէկ ամիս խմել այդ իւղից): Օգտագործում է նաեւ արեան, երիկամային, միզապարկի հիւանդութիւնների դէպքում:

Պնդուկ. օգնում է անօթային հիւանդութիւնների՝ երակների վարիկոզի, երակաբորբերի, սրունքը սնուցող անօթաբորբերի դէպքում: Կարգաւորում է վերարտադրութեան ֆունկցիան: Նրանում պարունակուող կալիումը, կալցիումն ու աղերը ամրացնում են ոսկրերը: Գետնանուշ. նորացնում է հիւսուածքները: Օգտագործում է գիրութեան դէպքում. չնայած գետնանուշը բարձր կալորիականութիւն ունի, դրանից չէք գիրանայ, եթէ բովէք առանց աղի եւ ուտէք ոչ մեծ քանակութեամբ: Օգտակար է անքնութեան, չոզնածութեան դէպքում: Օրական 20-25 ընկոյզ կը հարթեցնի կնճիռները եւ մազերին փայլ կը հաղորդի:

Լաւացնում է լիշողութիւնը, կենտրոնացումը (ուշադրութիւնը), լսողութիւնը: Նուշ. պարունակում է սելեն, մանգան, պղինձ: Լաւացնում է մաշկի, մազերի, եղունգների վիճակը: Օգտակար է հազի ու աղիքային հիւանդութիւնների դէպքում:

Պիստակ. պարունակում է ֆիտոստերիններ՝ թոքախտային ցուպիկի դէմ պայքարող նիւթեր: Եթե րաիւղերը հոգնածութիւն են վերացնում, օգտակար են լեարդի, ստամոքսի, արեան բարձր ճնշման, սակաւարիւնութեան ժամանակ: Հանգստացնում են բրոնխային հազը, թուլացնում են ալքոհոլային կախուածութիւնը: Նուազեցնում են սիրտ-անօթային հիւանդութիւնների, ինչպէս նաեւ քաղցկեղի հաւանականութիւնը:

ՍԵՐԿԵԻԼ

Հին յոյները սերկելիլի պտուղը սիրոյ եւ պտղաբերութեան խորհրդանիշ էին համարում: Այս պտղի մէջ մեծ քանակութեան պեկտինային միացութիւններ, ֆրուկտոզաներ, գլիկոզա, կալիումային աղեր, երկաթ, կալցիում, ֆոսֆոր եւ պղինձ է պարունակուում: Թարմ կամ չոր սերկելիլի եփուկը հնում օգտագործել են արգանդային արիւնահոսութիւնները կանգնեցնելու համար. օրը 3 անգամ սերկելիլի մանր կտրատած պտուղներից պատրաստուած թէյ խմել: Սերկելիլի սերմերից պատրաստուած եփուկը եւս շատ օգտակար է նման դէպքերում: Յատկապէս դաշտանադարի՝ կլիմաքսի շրջանում: Սերմերը լորձային մաս են պարունակում: 10 գրամ սերմերի վրայ 1 բաժակ եռացրած ջուր աւելացրէք, 7-9 ըրպէ թափահարէք: Ստացուած լորձային լուծոյթից, օրը 3-4 անգամ, ուտելուց 20-30 ըրպէ առաջ 1 ճ/գ ընդունէք: Շատ օգտակար է նաեւ գաստրիտի, վերին շնչուղիների համար: Նաեւ օգտակար է մաշկային այրուածքների, գրգռուածութիւնների դէպքում: Յիշէք, որ սերկելիլի սերմերը չի կարելի մանրացնել. հակառակ դէպքում նրանում պարունակուող թունաւոր նիւթերը կարող են վնասել օրգանիզմը: Սերկելիլի 5 բաժին տերեւների վրայ 200 մլ եռացրած ջուր լցրէք եւ թողէք սառչի. այս եփուկը կանխում է նաեւ բրոնխալ ասթմայի նոպաները: Հնում հեքիմները սերկելիլի հիւթով նաեւ

բուժել են անպտղութիւնը:

Ամէն օր անհրաժեշտ է երեկոյեան 1 ճաշի գդալ թարմ պտղահիւթ խմել: Տերեւների եփուկով կարող էք սպիտակող (սկզբի շրջանում) մազերը ներկել. հրաշալի երանգ է պարգեւում յատկապէս շագանակագոյն մազերին: Աւիցենան մարտդականութեան խանգարումների դէպքում խորհուրդ էր տալիս ստամոքսը եւ լեարդի աշխատանքը ամրացնել սերկելիլի պտղահիւթից, խնձորի բնական քացախից եւ բնական մեղրից պատրաստուած լուծոյթով: Նրա համոզմամբ՝ սերկելիլը նաեւ նպաստում է դէմքի մաշկի լաւացմանը: Բրոնխալ ասթմայի դէպքում օգտակար է հետեւեալ դեղատոմսը. 5 գրամ տերեւների վրայ 1 բաժակ եռացրած ջուր լցրէք, 15 ըրպէ լաւ տաքացրէք գոլորշու վրայ: Օգտագործէք օրը 3-4 անգամ՝ 2 ճաշի գդալով՝ ուտելուց 20 ըրպէ առաջ: 3 օրից աւելի չի կարելի լուծոյթը պահել սառնարանում:

Սերկելիլը խորհուրդ էի տրուում օգտագործել փորկապութեան, պլեւրիտի դէպքում: Այն վնասում է ձայնին, այդ պատճառով էլ խորհուրդ էի տրուում երգիչներին:

Սերկելիլի 100 գրամ չոր տերեւներով եւ 1 լիտր ջրով պատրաստուած եփուկը 1 ժամ թողէք սառչի, այնուհետեւ դրանով շփէք մազերը շաքար 2-3 անգամ: Ամրացնում է մազերը:

Հայի Աստուածը նրան օգնեց, Արարումի ճիւղում տաղանդ տւեց, Որ հայի հաւատքը անեղծ պահի, Որ հայ սրտերի կապը ջերմ պահի:

Երբ տառերի գիւտը իմացեց, Սրտերում գետնորսիւն տիրեց, Աշակերտները առ Աստուած աղօթեցին, Գոհութեան հանդէս կազմակերպեցին:

Ամէն գործ իր սկիզբն ունի, Ամէն սկիզբ իր վերջն ունի, Ամէն վերջ իր պտուղն ունի, Ամէն պտուղ իր արդիւնքն ունի:

Երանելիի ցանած հունդերը ծիլեր արձակեցին Տառերը ծնւեցին, յաղթութիւն մեծ անասելի, Տնաջան աշխատանքը յաջողութեամբ պսակեց, Բիւր օրհնութիւն ի փառս մեր Մեսրոպ Մաշտոցին:

Երանելիին նորոգ ծնեալ տառերը մագաղաթագրած Աշակերտների հետ Եղեսիայից նամուր մէ Սամոսատ, Այնտեղ խնդութեամբ աշակերտ ու վարդապետ մէկտեղուած Ապագայ գործերի համար միտք են անում յուսալատ:

Ունակները գեղազիր յոյն Հոսփանոսի մօտ տարւեց, Բաղաձայն ու ձայնաւոր կարգաւորւեց ու պատկերագրուեց, Մէկ-մէկ նախշուն պատառ այգաբացի հրաշալի տեսարան Պարգեւ տրւեց Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայութեան:

Նրանք լոկ չոր ու ցամաք գիր չեն, Մէկ-մէկ ներհուն ուժ են գերբնական, Մէկ-մէկ նառագայք են արեւագունդ, Մէկ-մէկ գագաթ են լեռն Արարատ:

Գեղաւորում տառերը պատրաստ էին ի ձեռք Հոսփանոսի, Փորձ արեց քարգմանութեան Սուրբ գրքի Հին կտակարանից, Նկատի առնեց մէկ տող Սողոմոն Իմաստունի առակաց գրքից՝ Հանաչել գիմաստութիւն եւ գիրատ իմանալ գրանս հանճարոյ:

Գիւտը վարդապետի կատարեալ էր հրաշալի, Կատարում փորձը ապացոյցն էր այդ արարի, Գործն արգասաւորում ժամանակն էր մեկնում, Թողնել Սամոսատ ու վերադառնալ երկիր հայրենի:

Լուրը տառերի գիւտի եւ վերադարձը Մեսրոպի Փայլակի արագութեամբ Վաղարշապատ է հասնում, Թագաւոր, կաթողիկոս, պալատականներ եւ իշխանք Բոլորով մէկտեղ մաքի ժողովուրդը ընդառայ են գնում:

«ՓԱՌՔԸ ՍԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ»

Շարունակում է 14-էն
Եղեսիա՛, Եղեսիա՛, դու նշանաւոր ֆաղափ, Հարուստ գրադարանով եւ պարսկական դպրոցով, Մեր պատմութեան մէջ յաւերժ յիշուող ֆաղափ, Որտեղ մեր աշակերտները լցւել են ուսումով:

Եղեսիա՛, Եղեսիա՛, դու արդ չես կոչուում այդ անունով հին, Թուրքերը փոխեցին ֆո անունը ինչպէս մեր շատ ֆաղափների, Հայ բնակիչներին ջարդեցին եւ իրենց անուններով կոչեցին, Ի սպառ ջնջելով ինչ որ հայի անուն էր եւ յիշատակներ հայի:

Եղեսիա՛, Եղեսիա՛, դու ֆաղափ հարագատ մեզ հայերուն, Յիշելու ես այժմ եւ յաիտեան սերունդների սրտերում, Քանի որ ֆո արեւի տակ եւ ֆո հողի վրայ իր խուցում, Երանելին մեկուսի, հոգով վերացած ու խոհուն:

Երկնեց հայառգի խորհրդաւոր նշանագրերը, Հայի արիւնից ու էութիւնից ծնուած գրերը, Հայի հոգու պէս գեղեցիկ ու շնորհալի տառերը, Հայի անցեալը, ներկան ու ապագան պատմող աւետարանը:

Նա տառապանքով, բայց սիրով արարեց գրեր, Անարիւն գէնք, գոգոգ, առիմֆնոգ եւ արեւային, Խաւարակուռ մտքերը լուսաւորող փարոսներ, Հայոց սրտերը միացնող պատգամ երկնային:

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ԱՄԵԱԿԻ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Շարունակում է շարունակվում է

որհանգիստի արարողությունը, ուխտագնացություն է ելնախաձեռնությունները:

Այն ըստ թե այս նպատակին համար վարչություն կողմից կազմակերպված շատուկ շանձնախումբ մը, որ իր մէջ կ'ընդգրկէր հետեւեալ անձնաւորութիւնները՝ Ժիրայր Դանիէլեան, Անդրանիկ Տազսեան, Եղիկ Ճէրէճեան, Ահարոն Շիրտըմեան, Լեւոն Նորտիկեան: Այն ըստ, թէ այսօրինակ ձեռնարկներ նահատակներու յիշատակը վար պահելու լաւագոյն առիթներն են:

Այն շատուկ շնորհակալութիւն յայտնեց 90-ամեակի հանդիսութիւններուն յաջողութեան սատարող տէր եւ տիկ. Վազգէն Գալթաքեաններուն, տէր եւ տիկ. Սարգիս Գանըզուրեաններուն, Հայկազեան Համալսարանին, տէր եւ տիկ. Կարպիս Պապահէքեաններուն, Ստեփան Փիլիպոսեան հիմնարկին, տիկ. Վերժին Ճէրէճեանին եւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկին: Փոլ Եագուպեան բարի գալուստ մաղթեց գիտաժողովին մասնակիցներուն շատկապէս արտասահմանէն ժամանած Արամ Արքունին, դոկտ. Ռեմոն Գէորգեանին, դոկտ. Վահէ Թաշճեանին եւ Լիբանանէն մասնակցող տղաք. Եղիկ Ճէրէճեանին, Ահարոն Շիրտըմեանին եւ Անդրանիկ Տազսեանին: Ապա բեմ հրաւիրուեցաւ Հայկազեան Համալսարանի նախագահ վերապատուելի դոկտ. Փոլ Հայտոսթեան: Այն յայտնեց, թէ մեր բոլոր հայրենակցական միութիւնները որոնց շարքին Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը շատուկ առաքելութիւն մը ունին իրենց ուսերուն վրայ, որ եթէ անցեալին հայութեան օժանդակէր, այսօր վերածնունդի կառուցներ ըլլալն է: Այս առիթով ան շեշտեց, մեր արմատներուն կառչելու անհրաժեշտութիւնը:

Գիտաժողովի բացման պաշտօնական հանդիսութեան խօսք առնելու համար շատուկ հրաւերով Պէյրութ ժամանած Հաճնոյ վերջին քաղաքապետին թուր՝ դոկտ. Ժերար Չալեան ներկայացուց Հաճնոյ պատմութիւնը, հերոսամարտի ընթացքին հաճնցիներու դիմադրաւած դժուարութիւնները եւ մարտահրաւէրները: Այն նաեւ ներկայացուց հերոսամարտին

խորհուրդը եւ շեշտեց, թէ հանդիսութիւնը առիթ մըն է հաղորդակցելու նահատակներու յիշատակին եւ կապ հաստատելու պատմութեան հետ:

Գ ե ղ ա Ր Ո ւ Ե ս տ ա կ ա ն յայտագիրով գիտաժողովի բացման հանդիսութիւնը ճոխացուցին Դալար Եագուպեան (ղաշնակ), Լուի Եագուպեան (սրինգ) եւ Արեգ Տազսեան (թաւջութակ): Անոնք նուազեցին Կոմիտաս-Ասլամազեանի «Կուռնկ»ը եւ Արամ խաչատուրեանի «Վարդագոյն Աղջիկներու» պարը ստեղծագործութիւնները:

Արմիկ Տազսեան ընթերցեց Հայոց Ցեղապանութեան Ծիծեռնակաբերդի թանգարանի տնօրէն Հայկ Տեմոյեանի ուղերձը: Սոյն ուղերձին մէջ Տեմոյեան կը նշէ, թէ Հաճնոյ հերոսամարտը իր ինքնուրոյն տեղը ունի հայ ժողովուրդի հերոսամարտերուն մէջ:

Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան իր սրտի խօսքին մէջ ըստ, թէ Հաճնի տարբեր սերունդները միասնաբար պաշտպանեցին իրենց աւանդութիւնները եւ արժէքները: Այս առիթով գործնական եւ շօշափելի աշխատանքով արդիւնաւորուելու մաղթանք մը յղեց գիտաժողովին:

Գ ի տ ա Ժ ո ղ Վ ի բացման հանդիսութիւնը փակուեցաւ Հաճնոյ քայլերդի յոտնկայս ունկնդրութեամբ:

Բացման հանդիսութեանէն ետք Հայկազեան Համալսարանի «Մաթոսեան» ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ Հաճնոյ պատմական նկարներու ցուցահանդէսին բացումը: Յանուն Հաճնոյ Հայրենակցական Միութեան երկարամեայ ատենապետ, կուսակցութեան եւ հասարակական գործիչ Վահրիճ Ճէրէճեանի յիշատակին, անոր կողակից տիկ. Վերժին Ճէրէճեան սիրայօժար ստանձնած էր ցուցահանդէսին հովանաւորութիւնը:

Այն պետական երեսփոխան մեթր Սերժ Թուրսարգիսեանի ընկերակցութեամբ հատեց ցուցահանդէսին բացման ժապաւէնը: Ներկաները ծանօթացան Հաճնոյ պատմութեան եւ անոր աւանդութիւնները ներկայացնող դէպքերու եւ անձնաւորութիւններու նկարներուն:

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՍԱԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Շարունակում է շարունակվում է

արուեստական յայտագիր մը ուր յաջորդաբար բեմ բարձրացան Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբէն անդամներ, սիրուած երգիչներ՝ Կարօ Կապուտակեան, Մանուկ Մինասեան եւ Պերճ Նազգաչեան, որոնք ազգային, հայրենասիրական ճոխ երգերով ճոխացուցին օրուան մթնոլորտը:

Կիրակի, 17 Հոկտեմբերի առաւօտեան Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ անմահ պատարագ ապա կատարուեցաւ մատաղօրհնէք:

Ինններու դէմ: «Մենք այսօր եւ միշտ յանձնառութիւնը եւ պարտաւորութիւնը ունինք հաւատարիմ մնալու հայ ժողովուրդի պատմութեան ոգիին եւ մեր առօրեայ կեանքին մէջ ճշմարտութեան համար ծառայ ըլլանք հասնելով նոյնիսկ մինչեւ նահատակութիւն: Հաճնոյ հերոսամարտի նահատակները պատմութիւն չեն մեզի համար՝ այլ յուշարարներ եւ ազդարարներ են որպէսզի մենք մեր կեանքին մէջ եղած դժուարութիւններուն դիմաց գիտնանք քաջաբար ընդառաջ երթալ եւ որոշել, թէ ինչ է մեզ ապրեցնող



Ի պատիւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի՝ Հ.Մ.Մ.-ի փողերախումբին մասնակցութեամբ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն մը: Սուրբ պատարագի ընթացքին հաւատացեալ ժողովուրդին ուղղած իր պատգամին մէջ առաջնորդ սրբազանը դիտել տուաւ, թէ քրիստոնեան ուր որ ալ ըլլայ միշտ ալ հանդիպած է դժուարութիւններու եւ սակայն ան միշտ ալ եղած է ճշմարտութեան վկան: Այն վեր առաւ Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն հայրենասիրական ոգին եւ սպառնալիքներու դէմ գլուխ ցցելու անոնց վճռակամութիւնը:

ընտրանքը» իր խօսքը եզրափակեց սրբազան հայրը:

Ապա տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նահատակներուն հոգիներուն համար, ապա մատաղօրհնութիւն որմէ ետք Ս. Գէորգ եկեղեցւոյ սրահին մէջ Հաճնոյ Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ



Առաջնորդ սրբազանը շեշտեց, թէ հայ ժողովուրդը միշտ ալ դէմ յանդիման գտնուած է սպառնալիքներու բաց դիմադրաւած է զանոնք որովհետեւ հաւատարիմ մնացած է Սուրբ Աւետարանին. «Մեր կեանքը պայքար է: Հաճնոյ մէջ զինեալ պայքար էր, մէկ այլ տեղ ուրիշ պայքար էր, սակայն ամէն տեղ պայքարը մէկ է՝ գոյատեւման պայքար: Հաւատքով եւ պատիւով ապրելու պայքար»: Առաջնորդ սրբազանը ըստ, ինչպէս հաճնցիներն նոյնպէս ալ բոլորը անվախ մնալու են անցողական եւ ժամանակաւոր դժուարութեան:

կէսօրուան ճաշի արարողութիւնը, այդ միջոցին Հաճնոյ Հայրենակցական միութեան վարչութիւնը շատուկ շնորհակալագիրներ յանձնեց գիտաժողովին մասնակիցներուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՇԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԱՃԵՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90 ԱՄԵԱԿԻ ԱՌԹՈՎ

Շարունակում է 1-ին

ջակիզում: Իր բնակչության մեծագույն տոկոսը անէացան: Հողին կապում, բերքին կարօտ, բնական իրենց նուիրում, իր ազգի և հայրենիքի սիրով տոգորում հանրեցին սակայն մերժեց մահը: Եղեռնին առաջ 36 հազար բնակչություն ունեցող, ապա 6 հազար մնացած բնակչության մեջ, Հանրեցին մերժեց մահը և այլևայլ մամբաներով վերադարձաւ գինու ու ժողովուրդ կանգնելու համար իր հողին ու ժողովուրդին, ապա ինքնով երոպայի տուած խոստումներում:

Քաջալերանքն ու թիկունքը պիտի ունենար ան իրքի փոքր դաշնակիցը յաղթական երոպայի: Քաջերական Գերմանիա և անոր դաշնակից Թուրքիան պարտուած բշնամիներն էի դաշնակցային պետություններում: Ֆրանսա հաւաստիացուցած էր հանրեցին, թէ իր իշխանութեան տակ առած ըլլալով ամբողջ Կիլիկիան, Հանրեցին պիտի դառնար ինքնավար շրջան: Հանրեցին լիցքաւորուած էր ազատագրական պայքարի տեղում: Վերադարձաւ իր քաղաքը Հանրեցին, այն յոյսով, որ փլածը պիտի վերականգնէր: Փակուած դպրոցը վերստին պիտի բանար: Պիտի վերամշակէր իր խոսակցած արտերը: Ձեռնարկեց ինքնապաշտպանութեան նախապատրաստական աշխատանքներու: Նշանակեց Հանրեցին պաշտպանութեան խորհուրդ և հրամանատար: Գոյացուց դրամ ու գինեալ ու: Ի մի հաւաքեց հանույ երիտասարդները: Ձինեց գանձն: Գնեց գէն, պատրաստեց ռումբեր: Ամէն տեղ էր խանդավառությունը:

Չուշացան սակայն յաղթական երոպայի չարաղէտ դիւանագիտական սաղորանքները: Մուտով իյայտ եկաւ երոպայի խոստումնադրութիւնը: Առաջինը՝ ֆրանսան, իր պետական շահերէն թելադրուած նախամեծար համարեց պարտեալ Օսմանեան Թուրքիոյ նոր առաջնորդ Աթաթուրքի հետ բանակցութիւններ վարելը: 20 Հոկտեմբեր 1921-ին. կնքեց համաձայնութիւն: Կիլիկիան յանձնեց Թուրքիոյ: Ինքն հեռացաւ գնաց: Հանրեցին մնաց առանձին, օգնութեան գրկուած և յուսահատ: Շրջանի հայ ազգաբնակչութիւնը վտանգուած էր:

Հանրեցին ունեցաւ իր երկրորդ եղեռնը, այս անգամ պարտուած թուրքազմական ուժերու անդիմադրելի թնթանքներու ահեղ և կործանարար տարափիւն տակ ու երոպական տէրութիւններու անտարբեր նայումներում ներքեւ: Խաբուած, շրջապատուած և արտաքին օգնութեան և սննդեղանքի սպաս գրկուած Հանրեցին ինկաւ կորտորուած՝ ամբողջ ուր ամիս հերոսական դիմադրութեան: Ետ: Իր

վեց հազար բնակչութեան հազիւ 380-ին վիճակուեցաւ յաջողիկ կոտորել շրջապատման շրջան ու վերջնականապէս հեռանալ երկրէն:

Այդ բոլորէն ետք, եթէ կարելի է եղեռն համարել նաեւ երոպայի անարգ դիմափոխութիւնն ու խոստումնադրութիւնը, ապա պիտի ըսենք, թէ Հանրեցին ապրեցաւ յաջողական երկու ճեղասպանութիւն և մէկ ցեղասպանական մեղսակցութիւն, որ ցեղասպանութիւն ըլլալէ չի դադարէ: Երոպան իր պետական շահերէն մեկնած, մոռցաւ Արարայի հրաշակերտ յաղթանակը կերտող հայկական լեզունով ծանօթ իր փոքր դաշնակցին՝ հայ Կիլիկիացիին գորակցութեան, պաշտպանութեան, մարդասիրական և քաղաքական տուած՝ ամէն խոստում, կոնակ դարձուց անոր, ազատ ձգելով իր դարաւոր բշնամիին ձեռքը՝ շարունակելու Օսմանեցիներու կիսատ ձգած ցեղասպանական կոտորածը:

Հանրեցին յիշեալ եռեակ փորձառութիւնը ունի իր թելադրականութիւնը, որ կը պատգամէ, ինչպէս միշտ ըսած և կրկնած ենք, թէ մեր ազգի գորտութիւնը կը կայանայ առանձնապէս մեր համախմբուածութեան, միասնութեան և հաւատարման միջոցով:

Հանրեցին յիշեալ այդ եռեակ փորձառութիւնը կը պատգամէ. հաւատք չընծայել օտարի գորակցական, պաշտպանողական և մարդասիրական փուռ խոստումներում: Անոնք կը նմանին աւագի վրայ շարադրուած անցողակի արձանագրութիւններու, որոնք կ'անհետանան առաջին իսկ հպումով ափ առնող ծովու ալիքին: Անոնք ընդհանրապէս ենթակայ կը մնան մահան տնօրինումներու և սեփական շահերու ապահովման, բոլորովին անտեսելով իր տուած խոստումները: Հիմնականը կամբը, ազգային միասնութիւնն ու հետեւողական պայքարն է, որ ցամբայ կը հարթէ դէպի յաջողութիւն և ազգային ձգտումներու նուիրագործում:

Մահը մերժող հանրեցին, իր ազգային ձգտումներուն նուիրագործման նախապայքին, որպէս խորհրդանիշ, երեսնի սուրբ հողին վրայ բարձրացուց Հանրեցուանը: Այսօր տասնամեակներ առաջ կառուցուած այդ հոյակերտ աւանը կը ծաղկի և կը գեղեցկանայ, ամէն օր: Հանրեցուանը և աշխարհով մէկ ցրուած հանրեցին այսօր և միշտ, երախտապարտ գգացումներով կ'ոգնեն իրենց տասնեակ հազարաւոր հերոսածին նահատակներուն անբառամ յիշատակը:

Անոնք ինկաւ յանուն ազգի, հայրենիքի և մեր դարաւոր ձգտումներու նուիրագործման նախապայքին:

Ներկայ գտնուիք արժանաւորապէս պատուելու մեր չորս յաջողած հայուհիները և նորաձեւութեան ասպարէզի հայ աստղերը: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնեցէ՛ք հետեւեալ թիւերուն. (323) 874-2471, (949) 644-6456, (310) 472-2454:

ՀԱՃԵՆՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Շարունակում է 7-էն

Տեսնենք բշնամին ի՞նչ կ'ուզէ: **Ձէնք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1.200 տղամարդկանց բաժանուած է եղած-չեղած 132 հրացանը: Յետագայում ձեռք է բերուած նաեւ երեք հարիւր հրացան, սակայն այդ ևս խիստ անբաւարար էր բոլոր կեան անսպառ ռազմամթերքով գինուած թրքական բանակի դէմ կռուելու համար: Ահա թէ ինչու գէնք ի խիստ կարիք գգացող հաճընցիներն անհամբերութեամբ սպասում էին Ատանայի Ազգային միութեան միջոցով դրսից ակնկալուող օգնութեանը, որի շնորհիւ ոչ միայն գէնք ու գինամթերք, այլև կռուող նոր ուժեր պիտի հասնէին: Վերջապէս երկնքում յայտնուած է բաղձալի օղանաւը.**

Օղանաւ եկաւ մեծ աւետիսով, Մեր սրտերը լցուան ուրախոյնս սերով, թափառին բոլոր մարտիկներն անզէն.

Անոնք հոգիով թուրք ջարդել կ'ուզեն:

Երոպայներն արդէն նամակ գրեցին.

«Կոուեցէ՛ք, երբայրք, կը հասնինք», - ըսին,

Սակայն ի՞նչ խաբար, օրերնիս անցան.

Հազար հոգիէն երկուրէն չերեցան:

Եւ հաճընցի «անզէն մարտիկները» վիճակը դառնում է յուսահատական, քանի որ ֆրանսական զինուորական ներկայացուցիչները վարում էին երկդիմի քաղաքականութիւն. թէպէտ խոստացել էին ինքնապաշտպանութեան համար տրամադրել անդամթերք, գէնք ու գինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն յարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանութեան կազմակերպման մասին.

Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՛ն հանրեցին,

Գրաւենք՝ ըսին, թէ ոչ՝ կը մեռնինք,

Գրաւենք՝ գմբգ թնդանօքն ահեղ,

Թող յաղթանակը տանին փառահեղ:

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժուարութեամբ գրաւում են թշնամու հսկայ թնդանօթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտպանուեն: Սովը նեղում է հաճընցիներին. ժողովուրդը ստիպուած սկսում է ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղեւ, տրեխ: Թշնամին նորանոր թնդանօթներով ու անյամար կանոնաւոր գորքով համարում է իր ուժերը: Ութ ամսեայ երկարատեւ ու չամառ դիմադրութիւնից յետոյ թուրքերին յաջողում է հրետանու խաչաձեւ կրակոցների հեղեղով աւերել ու հրկիզել նաեւ Հաճընցի քարաշէն տները: Հարիւրաւոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարաւոր հաճընցիներ անխնայ կոտորուում են: Միայն 380 հոգու է յաջողում կռուելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահաւոր հրդեհի շրջապատումից.

Երեք հարիւր հայ քաջերով, Բոլոր գինուած մոսիմներով, Դողան քէլին մեք ջարդ տալով,

Հանրեցին կաւ «վրէժ» գոռալով:

«Վրէժ» գոռալով ընկնում են նաեւ ընդհատումներով երեք հարիւր տասնչորս օր հերոսաբար

դիմադրած Այնթապը, հինաւուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցեալ ունեցող Տարսուրը, առեւտրի կենտրոն Ատանան և հայերով բնակեցած Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարութիւնը, դրժելով իր դաշնակցային պարտաւորութիւնները, 1921 թ. Հոկտեմբերի 20-ին, Անգարայում կնքուած պայմանագրով, Կիլիկիան յանձնում է թուրքերին կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայութիւնը: Իսկ արժուաբոյն Ձէյթունը, որի 30.000 կայտառ ու շէն բնակիչներից միայն 1.058 էր Հայոց Յեղասպանութիւնից մազապուրծ վերադարձել ու հազիւ սկսել վերականգնել աւերուածն ու հրկիզուածը, այդ գէյթունցիներից շատերը, ազգային հերոս Արամ Չոլաքեանի գլխաւորութեամբ և նրա գինակիցներ Յովհաննէս Սիմոնեանի, էշխախայ (հրոսակ) Կարապետի, Մանուկի և այլ կտրիճների հետ, միանում են Ամանոսի լեռներում ըմբոստացած հասանելիցի (Ատանա) Աւետիսի հերոսների խմբին: Հետզհետէ ստուարացող, հինգ հարիւրի հասնող, այր ու կին քաջերը Տարսուսի անանցանելի լեռներում, գէնքը ձեռքներին, գիշեր-ցերեկ կռուելով, ահ ու սարսափի են մատնում շրջակայ թուրք գիւղերը և թէպէտ հետապնդում են ասկերներին, սակայն, անասելի դժուարութիւններ յաղթահարելով, մինչև գինադադարը շարունակում են մարտնչել թուրքական զօրքերի դէմ չոյս ունենալով փրկել իրենց նախնիների օրրան, երբեմնի շէնչող Կիլիկիան:

Յետագայում արեւմտահայերը, վերաբնակելով իրենցից բռնագորաւուած պատմական Հայաստանից 10 անգամ փոքր հողատարածքի վրայ, երեսնի շրջակայքում սկսում են հիմնադրել իրենց պատմական հայրենիքի յիշատակները խորհրդանշող աւաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Արաբկիր, Նոր Ձէյթուն, Նոր Մարաշ, Նոր Հաճըն, Նոր Այնթապ, Նոր Մուսայ լեռ, Նոր Եղեւսի (Ուրֆա) և այլն), սակայն երբեմնի աւերակուած տան, յանգած օճախի մրմուռը շարունակում է միայլ նրանց յիշողութեան մէջ, և գաւթուած երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ժողովրդայնացած երգի տեսքով աւանդում է սերնդից սերունդ.

Երբ որ բացուի ղոններն յոյսի, Եւ մեք երկիր դառնանք կրկին, Չկնաղ երկիր մեր Հայրենեաց, Որ բնութեամբ առին մեզնից: Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան. Օղբ՝ մախուր, ջուրը՝ գուլալ, Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան. Վանքեր, բերդեր հոն տեղ շաւտ կան:

Երբ որ լուծուի Հայոց Հարցը, Եւ մեք տրուի նախնեաց հողը, Մեք կը վարենք մեր արտերը, Կը շէնցանք մեր գիւղերը: Ցանկամ տեսնել Սասուն ու Վան, Ձէյթուն, Հանրեց և Մուսա Տաղ, Տարսուն, Մարաշ, Սիս ու Այնթապ, Կը ծաղկացնենք մեք անպայման:

Թէպէտ թրքական կառավարութիւնը դաժանօրէն ընկճում էր տարբեր վայրերում ծայր աւած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրաւունքները և ազգի ֆիզիկական գոյութեան համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմութեան մէջ:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 8-էն

Ճրագիրներ օգնելու Հայաստանի կարօտեալ ընտանիքներու, ինչպէս նաեւ հաստատած է բազմաթիւ համալսարանական կրթաթոշակներ, հայ ուսանողուհիներու համար: Կը խնդրենք որ խուռներամ

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



"Քաջ Նապար" հանդեսը եւ հեռուստաժամը
Ներկայացնում է

11-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,
ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆԴԱՍ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ
(հիմնաձ 1999թ.)

Կիրակի, հոկտեմբեր 31, 2010
երեկոեան ժամ 4-12-ը

Sponsored by

"KACH NAZAR" Magazine & TV Show

11 ANNIVERSARY

NATIONWIDE **TELETHON**

ON SUNDAY
OCTOBER 31, 2010

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES

ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ
ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԲԱՄԱՐ

HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .
www.forourkids99.com

AMGA
CHANNEL 380
Glendale, CA
From 4:00 pm
12midnight



Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.

Ձեր օգնությամբ մենք ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգեւում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...



P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070
E-mail: Forourkids99@gmail.com Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity

